Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1819

1999

43950-Ա.Հ.

ՏԱՒԻՂ

ՆՈՒՆԵԱՆ-ՎԱՐԴՈՒՀԵԱՆ

ՍԱՆՈՒՀԵԱՑ

ԼԷՕԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

1985

Ազգային գրադարան
Гос. Библиотека
ՀԱՅՍՐ-ԳԻՐ
им. А. Мясникяна
и Сергеевича

Կ. ՊՕԼԻՍ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ց. ՊԱՐՈՆԵԱՆ
— 1877 —

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԿՈՍՏԱՆԴՆՈՊՕԼԻՍ

ՈՒՍՏ ԿԱՆ ԳՐՍԴԱՐԱՆ
Ս. ՄՇԱՍՆԻԿՅԱՆՆԵՐԻ
28004-62 Գ
+1819-ԱՍՏ
Հ.Գ. 1825

ՆԱԽԵՐԳԱՆՔ

ՄՏՔԻՍ ԶԱՒԱԿՈՒՆՔ

Թեսիս իւր Զաւակն ոխերիմ ոսոխներու հարուածներէն անխոցելի եւ անպարտելի ընելու համար Ստիւքսի մէջ մկրտեց զԱյն։

Ովկէան՝ երբ իւր ձիւնեղ փրփուրներէն ըստեղծեց զ'Վէնիւսն՝ աղեղ մը տուաւ նմանձին անվեհեր պաշտպանելու համար։

Զեւս երբ ծնաւ զ'Աթենասն իւր Ըղեղէն՝ եգեան Ասպարն ապաւէն տուաւ նմա դժպիհի արկածներու ընդդէմ։

Ես ալ՝ Ձեր Հոմերական սիրան եւ Ամենական միտքն՝ զ'որ այժմեան արդեանցս Գլուխ-Գործոցը պիտի վարկանիմ. քարուտ ու փշուտ, նախանձոտ ու յաչաղկոտ աշխարհին հարուածներէն անխոց, յարձակումներէն անառիկ, վրդովումներէն անսասան, լուտանքէն անեպեր, աղտերէն ամբիծ՝ պահելու պահպանելու համար՝ Քնարը տուի Ձեզ։ Երբ վերատին ընթերցայ Ձեր Տաղեր, երբ վերստին լսեցի Ձեր Տաւիղ, զ'որս դիտողութեանս կ'ներկայացնէք եւ զ'որս հրատարակելու համար՝ հաւանութիւնս կ'հայցէք։ Ճիշդ նոյն վսեմ հրճուանքն ունեցայ, ինչ հրճուանք որ ունեցան Քառամատենին Սերմանացանն՝ պարարտ հողին վրա ինկած ու ծլած սերմանեաց ատոք եւ յուռթի հասկերը տեսած ատեն։

Կ'վկայեմ թէ վաղահաս էք, բայց ոչ խակա-նո՞ւ։ Որովհետեւ աշակերտուհիներս էք, անոր համար չէ որ կ'բերկրիմ Ձեր մտաց նախախայրի արդեանց վրա։

Ձեր գրուածին մէջ՝ Արուեստէն աւելի՝ բնու-թիւնը կ'խօսի, մինչդեռ ես Ձեզ լոկ գրելուն արուեստն ուսուցի։

Ինձ այնպէս կ'թուի թէ Ձեր բարեկիրթ, աղնուատոհմ, համեստ, փափկասիրտ ծնողքն եւ ընտանիքն ալ մեծ դեր ունեցած են, Ձեր սիրտն ու միտքը բնականապէս բարուք մշակելուն մէջ։

Ձեր մատներն անոր համար Քնարին թելերն յար շարժելու առաջնորդեցի. Քանզի գիտեմ եւ կ'հաւատամ թէ՝ բանաստեղծ-ը-նէ-ն է միայն Անմեղ-ը-նէ-ն լեզուն։ Աստուած անգամ բանաստեղծի մը լեզուն, Քերդողի մը Քնարն յանօթ առաւ, երբ խօսիլ կամեցաւ։

Կ'յիշէք. օր մը բանաստեղծութիւնն ու անմեղութիւնը՝ Դրախտին սեմին վրա իրարու հանդիպեցան. մին երկինքէն յ'Երկիր կ'ինջնէր, միւսն երկրէն յ'Երկինք կ'ելնէր։

Մտքիս Ձաւակունք, Ն. Վարդուհեան վարդաստանին սեմին վրա՝ Ձեր տաղերուն մէջ երկոքին ալ միացած կ'տեսնեմ։

Բանաստեղծութիւնը բոցեղէն է. վասն զի կ'վառէ։ Բայց նման Մովսիսի Մոլեռ-ոյն բոցին՝ որ կ'վառէր բայց չ'էր այրեր։

Բանաստեղծութիւնն Աստուածային է. զի յատկանիշն է ոգեղէնէ։

Բանաստեղծներու ոգին՝ ինչպէս կ'ըսէ Լամարթին, բոցերէ զտուած Արոյր մ'է։ Ո՛ր կիրք գայ զարնուի այդ Արոյրին՝ ներդաշնակ ու սքանչելի ձայն մը կ'հանէ։

Անոր համար տենչացի որ դուք աւելի հոգեկան Սափոշիներ եւ Երինաներ լինիք, քան թէ պերճաբան Հորտինսիաներ։

Որոտընդոստ Բեմին աւելի՝ փափկախօս Քնարը կ'վայլէ ձեզ։

Դուք խօսելէ աւելի երգեցէք։ Երգերը բարիներու եւ անմեղներու խօսքեր են։ Ձարերն ու մեղաւորներն երդ չունին կ'ըսէ ՇԻԼԼԷՐ։

Ձեր ամբողջ իմաստասիրութիւնը Տիրոջն երկիւղն է։ Ձեր սիրտն ու հոգին այն անմեղութեան խորանն է՝ ուր Աստուած կ'բնակի։

Դուք ամեն բանէ, ամեն մարդէ առաջ զԱստուածն ի՛ Ձեզ ունիք։

Ապա հանապազ Աստուծոյ հետ խօսելու պէտքն ունիք։

Երգերը վսեմ Աղօթքներ են. եւ աղօթելն Աստուծոյ հետ խօսիլ չէ։

Անմեղ եղիք. բայց ոչ՝ մի՛ ըլլաք։

Տգիտութիւնն Անմեղութեան հետ մի՛ չփոթէք։

Շնորհակալիք Ձեր այն բարեջան Հոգաբարձուայ եւ Ձեր բաղմարդիւն Ծնողաց «ոմանց» որ թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս քաջալեր եւ օժանդակ հանդիսացան, Ձեր Տաւդին օր մ'աւելի առաջ լոյս տալու համար։

Գիտեմ թէ՝ Ձեր Տաւիղը՝ տասներորդ Մու-

սայի մը մատանց տակ չէ որ կ'Թրթռայ, բայց գիտեմ որ ՆՈՐ է եւ ԱՌԱՋԻՆ։

Ամեն ինչ որ Նոր է եւ առաջին՝ միշտ ծոփ կամ բրէչ, Դոփնէ կամ Ծաղր ունի։

Ձեր տաղերն իրենց ծափն եւ Ձեր Տաւիղն իր դափնին ունին։ Իսկ քրքիչն ու ծաղրն այն տկարաց բաժինն է՝ այն տխմարամիտ տկարաց՝ որոնց Ընդունչ՝ ան Աղուէսին նման՝ երբ խաղողին ՝ՀասանՀէր՝ ազիւ է, կ'գոչեն։

Եւ՝ Ձեր Վարպետը՝ կ'չնորհաւորեմ Ձեր Նոր բաբոյր Տաւիղն եւ կ'մաղթեմ որ միշտ Բարի, ճշմարիտն ըլլան Ձեր տաղերուն նիւթ։

Բարին ու ճշմարիտն անմահ եւ անթառամ են ց'միշտ։

Կ'հաւանիմ որ Ձեր Տաւիղը Լոյս տեսնէ. որպէս զի այսմհետէ Լուսոյ արժանի գործեր գործելու մէջ քաջալերուիք. եւ անոր համար Ձեր դասական աշխատանքներն հրատարակելու չ'դժկամակեցայ, որպէս զի Ձեր դասական աշխատանաց մէջ եւ հետ յառաջադէմ լինիլ գուն գործէք. որով միայն վարձատրուած լինին պիտի Ձեր Վարպետին Աշխատանքն եւ գոհունակութիւնն՝ որով պատուեց զ'Ձեզ։

Վարպետ Ձեր
ԼՈՒՍԻՆԵԱՆ

1876 Դեկտ. 16
Սամաթիա



ՄՐՄՈՒՆՋ ՄԱՆԿՈՒՀԻՈՑՆ

Տէր, որ լսես ճնճղուկին,
Տերեւին տակ թառած ատեն,
Տէր, որ մեղուին բզզանաց
Ունկն դնես խոնարհաբար։
Լուր եւ մրմունջն իմ չրթնեկաց։
Յ'ստեանց անտի մօրկանն իմոյ՝
Սիրեմ ընդ չողս առաւօտին՝
Երգել զ'քո մեծ Գթութիւն։
Ընդ խուսնկս հողմոց՝ հոգւոյս ըղձեր
Թռչին առ քեզ թեթեւասոյր.
Տէր, Ովկէանու ալեաց նման՝
Մշտատատան ծփան աղդեր։
Դժպիհ դիպաց խեռ փոթորկէն,
Փչրին դարուց հաստ ժայռին դէմ։
Ես փարատ յ'այդ խեռ վրդովմանց՝
Սիրտս ու հոգիս անմեղունակ
Առ քեզ՝ ի թեւս իմ աղօթից՝
Յղեմ՝ իբրեւ պատանդ սիրոյ,
Տէր իմ. ընկալ զ'իմ ջերմ մաղթանս,
Արա ընդ իս, ըստ քո կամաց։
Մանկուհի մ'եմ մատուռս ի քնար՝
Շուրթս ի գեղջոս նորանուագ՝
Գամ խառնել չունչս՝ զ'քեզ երգող
Բնութեան բիւր չքեղ ձայնից
Մշտամուռնջ դաշնակաց հետ։

ՎԱՐԴ

Շող չաղ կաթէր բոց առաւօտ
Շափիւղ զմրուխտ ցոլար երկիր,
Ներհէր զեփիւռ սիրելաշունչ.
Կուսին մատներն գեղաչիտակ
Կը գողային քնարին վրայ՝
Իջի պարտէզ բուրազուարթ
Կանաչներու մէջ պլլուած՝
Լուսնոյ նման պայծառ փայլող
Տեսի ճակատ ցօղաթուրմիկ,
Զըլլայ ըսի սա մանկան մը
Խանձարուրէն պլպլացած աչուկ.
Կամ թուփին տակ փալփլող աստղ մը,
Զգեցի ձեռքս, ՀԻ, ինչ տեսնեմ.
Վարդ մ'էր դեռ նոր՝ փթթած չքնաղ,
Խնկոյ բուրվառ մ'էր սիրածուխ,
Սիրէր արեւ. սիրէր լուսին
Շողալ նորա թերթից վրայ,
Սիրէր կոյսը պճնել նովաւ
Իւր ճակատը եւ գիրգ կուրծքը.
Սիրէր Աստուած իւր խորանը
Նովաւ միայն պճնազարդել.
Առ ինչ ուրեմն յապաղեմ ես,
Ո՞վ վարդ, սրտիս խնդումին զարդ,
Վարդ. քեւ ճակտիս կուգայ դարուն,
Վարդ. նոր դրախտ բանաս հոգւոյս,
Երբ միշտ այսպէս բացուիս չիկնոտ.
Ափերուս տակ քաղցածածուկ։

Վարդ. երբ դէռ կոկոնէդ մէջ
Որպէս մանկիկ մ'յօրօրոցին.
Զ'քեզ գգուեն ճաճանչք արփւոյն,
Զ'քեւ ծփան հողմունք ամէն.
Այսպէս յուսոյ՝ սիրոյ ծրար
Կախուիս փթթիս թփոյդ ի կող,
Վարդ վառ վառեալ ի'թոյր կարմիր.
Քանի ի'քեզ հայիմ ընդ այգն՝
Կարծես սրտիս ամբծութեան
Նոր ստուերին տեսնեմ ճօճելն։
Վարդ. դուն վասն իմ. նոր մատեան մ'ես.
Ամէն առտու՝ նշուլին հետ՝
Ամէն իրիկուն՝ հովիկին հետ՝
Ամէն գիշեր՝ աստղերուն հետ՝
Ամէն գարնան՝ սոխակին հետ՝
Սիրեմ կարդալ քեզ 'ղմայլիլ։

ԳԱՐՈՒՆ

Հոս խունկ տայ բոյր,
Հոն շող տայ թոյր,
Ատ վարդ ծլի,
Անդ շողն ոսկի,
Անդին առուակ,
Որպէս լուսնակ՝
Ծաղիկ խոտոց
Սողայ ի'ծոց։

Ուշն եւ գառնուկ
Մայեն պաակուկ ,
Պլպուլն ի՛վարդ
Ճլվլայ զուարթ .
Զոր կողք ծառոց՝
Զոր ճեղք թփոց
Սաղարթագեղ
Պճնին ցեղ ցեղ ։
Սրտեր ամէն՝
Հոգիք ամէն
Զուարթ ի՛խինդ՝
Կայտառեն ի՛թինդ՝
Ծաղկոտ գարուն ,
Ատեն սիրուն ,
Իմ ճակատուն
Նարօտ սիրուն
Սիրեմ ընտրել
Նա առաւել
Քո վարդերէն ։
Քան թէ յ՛ականց
Պատուականաց ։

ԿՈՅՍԱՆ ԶՈՒԱՐԹ

Տես սա ծաղկոտ բուրաստանին
Կնդրկաբոյր խնկենուոյն տակ՝
Անմեղունակ կոյսն ի՛յակճիռս
Իւր նորաբոյր զուարթ կիթառ՝

Գեղաշիտակ մատանց ներքեւ ։
Գոգչիր յ՛երկնից յ՛երկիր իջած
Մի երկնային զուարթուն էր .
Իւր ոսկեձոյլ դեղձան ծամից
Գեղագանգուր հոպոպիկներ .
Ի՛ափիւռ զուլամբ փղոսկրեայ
Հողմոց ի՛շունչ ծածանէր մեղմ.
Աչերն անոյշ եւ լուսալիր
Հոգւոյն ի՛խանդ ոգեւորուած՝
Վարդ եւ շուշան կաթկթէին .
Իւր գեղորակ ամբիծ այտեր .
Իւր կարմրալար երկթերթ շրթներ ,
Կիսահերձիկ նռան նման՝
Զ՛եհոգային ալէլուներ
Կ՛հնչէին քաջ քան զվին ։
Հաւուց աւաչն եւ դայլայլիկ
Իւր ձէնիկին հետ խառնուած՝
Երկնանուագ մեղեդիներ
Յօրինէին նազելաձայն ։
Վարդից ի՛փունջ գեղաբոլոր
Պճնազարդած էր սխրալի
Իւր ճակատը լուսահրատ ,
Որուն խոկմունքն Աստուածաշունչ՝
Քան զնուագ աղդեցին ինձ՝
Մատն ի՛քնար՝ աչերն յ՛երկինս՝
Շուրթն ի՛նուագ՝ զմայլէր նէ .
Եւ սոյն պահուն հոգեհմայ՝
Նոր եռանդով խանդավառուած ,
Ցոյժ քաղցրացայ՝ որպէս զայս կոյս .
Ընդ միշտ զուարթ եւ երգեցիկ

Երգել զԱստուած եւ աղօթել ։
«Զար են անունք եւ անդր չար»
Որ երէ, «ոչ» չունին երբէք ։
Բարի սիրտ մը ե՛ աղնիւ հոգի
Ոչ այլ ինչ է՝ բայց եթէ լոկ՝
Նուագ մը երգ , մրմունջ մ՝աղօթք ։
Տեսէք ինչպէս խանդաղատուն
Ունի զաչերն թաթախ ի՛նիրհ ։
Կարծես հեզիկ աղաւնեակ մ՝է ,
Սուրբ սեղանին վրայ ի՛նինջ
Կրօնի խաղաղ թեւոցը տակ ։
Ելեւիջէ սիրտն ընդ լանջօք ,
Որպէս ալեակն սիրելաչունչ
Հողմոց խնկոտ թեւերուն տակ ։
Երբ կ՝նիրհէ , գոգ կ՝զմայլի ,
Երազք անգամ չ՝իյշեն երբէք
Խռովել զոգին ոսկեղինիկ ։
Կուսին հոգին պերճ խորան մ՝է ։
Սիրտն է բուրվառ կնդրկաբոյր ,
Ուր թէ Աստուած եւ թէ Հաւատք
Սիրելահաչտ պաչուին ընդ միչտ ։

ԾՈՒԾԱՆ

Նորափթիթ սիրուն չուչան ,
Է՞ր դու այդպէս ձիւնաթուրիկ ։
Թերթերդ ի՛սիւռ հողմածածան՝
Կնդրկաբոյր բաժակդ ամբիծ

Կ՝քեռ ի՛վայր սգալռիկ ։
Ո՞վ դու ծաղկանց չքնաղ դժխոյն ,
Է՞ր այդպէս վաղ կը թարշամիս ,
Մինթ՝ արեւն իւր ճաճանչը՝
Շուքն իւր զովը , հողմիկն իւր չունչ՝
Զլացաւ քեզ՝ Գեղեցիկդ ,
Մի թարշամիր , չուչան պճնոտ ,
Դու հարանացու կուսին հանգոյն՝
Երջանկութեան դրախտին մէջ ,
Գեղածիծաղ բացուող ծաղկին
Սիրափթիթ կոկոնիկն ես ։
Ցողիկ , չաղիկն զքեզ սիրեն ,
Հողմիկ , թռչնիկ զ՝քեզ գգուեն ։
Բացուէ չուչան , չիկնոտ չուչան ,
Թօչնած հոգւոյս թարմութիւնն ես ։
Խամրած հոգւոյս գոյնն եւ բոյրն ես ։
Մի թարշամիր ։ ծաղիկդ աղնիւ ,
Սպիտակափառ եւ խնկաբոյր ։
Սիրեմ ես միչտ քու քովիկդ
Նիստ ու անդորր ու չունչ առնուլ ։
Բացուէ , չուչան ։ երբ դու բացուիս ։
Բացուի եւ իմ տխուր սրտիկս ,
Շուչան ։ քեզմով հոգիս աւեր
Ծաղկապսակ նոր դրախտ մ՝է ։

ԱՐԵԳԱԿՆ

Ծայր , ծալ , ծաւալ տայ արեգակ ,
Շաղփիւղ , զմրուխտ , յակինթ , գոհար

Փայլ զ'փայլի տան գեղորակ ·
Ոսկի , ծիրան կը նշուլեն ։
Ամէն տերեւ , ամէն ծաղիկ
Նոր բոյր , նոր թոյր կը շողշողեն
Մորչ գալարեաց սիրուն ծղիկ ·
Ամենուրեք փթիթք հոյլ հոյլ
Ծին ծիլ ու ծիղ վերընձիւղեն ։
Ծաղի արեւ , շողան ամէնք ·
Վարդն ի'թփին պճնազարդի ,
Պտուղք՝ ի'յոստ ոսկի զգենուն ։
Առնու թիթեռն թիռ թեւ թեթեւ ։
Շուրթն յ'ալէլուն պարզի Երկնից ·
Թնդայ տաճարն ի'մեղիդիս ·
Անձնիւր փութայ յիւրն ի'վաստակ ·
Մատն ի'վրձին եւ կամ յ'ասեղ ·
Ծաղկունք , գոհար կ'թափթփին ·
Երբ նշուլից հետ՝ կ'շարժին
Դա Զքնաղին ճարտար մատներ ·
Ի՜նչ քաղցր է այգուն արեւ ·
Արփի զայգն ի'լոյս բացած ատեն
Բացուի եւ իմ մատղաշ սրտիկ ։

ԿՈՉՍՆ

ՅԱՒԵՐԱԿՍ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Գեղանշոյլ ի'դէմս առոյգ՝
Բաղմած յ'աւերս Հայաստանին ·
Եւ զեօթնաղին իւր արցունքոտ

Փափուկ գրկանց վերայ առած ։
Կ'երգէր զուարթ մելանուագ ։
Փոշիք , մոխիրք հայ Հայրենեաց
Այս նոր ձայնին արձագանքէն՝
Գոգ նոր կենաց թունդ ու կայտիռ ·
Ո՜հ , կ'առնուին վերկենցաղեալք ։
Ստուերքն Հայոց Մեծաց քաջաց
Իրենց մամռոտ գերեզմանաց
Խորէն ի'վեր առած ճակատ ,
Ուշիմ ուշով ունկն դնէին
Կուսին երգոց երկնաշնչիկ ·
Հայոց աղատ բամբռան թելից
Նուագները էին նոքա ·
Պերճ , վեհ , վսեմ , լուրջ նուագներ ·
Որք գոգ բաղում դարուց հետէ
Լռած էին , ինչպէս երբեմն՝
Սուրբ Սաղիմայ քարայրին մէջ՝
Կամ Թափառկոտ Իսրայէլին
Ցունկն ի'խոնարհ , եւ կամ երբեմն՝
Զինչ ի տաճարն աւերակաց՝
Լռած էին Մարգարէից
Որոտընդոստ պատգամները ։
Կամ Աստուծոյ ալէլուներն
Ի շուրթն ընկճեալ ու արտալած
Ու տարագիր նժդեհ Դպրաց ։
Կոյսն էր փափուկ ու նազելի ·
Գեղագանգուր վարսին հոպոպ՝
Խնկաբուրիկ հողմին ի'չունչ
Ոսկեծածան կ'ալեծփէր ,
Գեղաչիտակ մատանեաց պրպ

(11985)
28004-62

Ո՜հ Հայրենիքնե՞ր այն աւերակ ·
Գոգ հոյակապ նոր կ'կանգնէր ·
Եւ ընկճեալ հայն նոր շունչ կ'առնուր ,
Հին փառքերու մարած արեւ
Նոր հորիզոն կը տեսանէր ·
Կոյս տարփալի եւ փարելի ·
Դու հայրենեաց վեհ ոգեկոչ ես ·
Որ զինչ հրեշտակ ոք տարագիր ·
Գոգեալ ի՝կերպ մահկանացուի ·
Ծպտեալ ի՝կոյս նաղելաշուք ·
Կերգես զաւերս Հայաստանին ·
Կերգես հայուն անմխիթար ·
Արցունքներուդ ամպոց ներքին՝
Նորանշոյլ փայլատակէ
Անխաբ յուսոյ ծիածանը ·

ԿՈՑՍՆ ՀՈԳԵՎԱՐԳ

Դեղին դալուկն ահա պատէ
Զիմ վարդածիր դէմքն ու շրթներ ·
Ահա խարտեաշ աչացս մէջ
Կ'չիջանի լուսոյն նշոյլ ·
Մահաշշուկ շշուշն հողմոյն
Շուրջանակի մեն գայ կոծով ·
Մայր իմ , ահա հասաւ այն ժամ՝
Ուր ալ պիտի թողում քնարս ·
Որոյ թելերն թրչուեցան
Ցաճախ իմ ջերմ արցունքներովս ·

Քնարս՝ որով անցան կենացս
Գեղեցկագոյն առաւօտներն՝
Ո՜հ · սիրէի թռչնիկին հետ՝
Երգել թփոց տակ ի՝ճառուող՝
Ո՜հ , սիրէի ընդ այգս այգուն
Շողալ դա ջինջ Արեւին հետ՝
Հասաւ ալ այն տխուր՝ ժամը՝
Ուր ծաղկատի կեանքիս թառեր
Աւաղ՝ վերջին վարագոյրը
Պիտի իջնէ սգաղբօղիկ ·
Ճակտիս նարօտն ադենահիւս
Անկաւ յանդունդ գերեզմանաց ·
Ա՛լ սեւ հողերն ինձ օթարան ·
Թողնել մօր մը փափուկ գիրկը ,
Թողնել արեւ , թողնել կեանքը ,
Իջնել ի՝գուբ մեռելոտեաց ,
Ա՜հ · ինչ տխուր մտածում է ·
Շիջան , չիջան հոգւոյս լուսեր ·
Նոճի՝ արցունք թող շուք լինին
Գերեզմանիս քարին վրայ ·
Գարուն , երբոր ծաղիկ բանաս ·
Ի՝ յիշատակ այն Պսակին՝
Զոր հիւսէի ամէն առաւ՝
Զքնաղ ծաղկանց փունջերովը ·
Ո՜հ , մի՛ մոռնար եւ զ'իս երբէք ·
Անմխիթար գերեզմանիս
Մահարուրիկ եղերց վրայ ,
Գէթ փթթեցուր մի՛ քանի վարդ ·
Ցաւէրժական մխիթարանք ·
Ի յիշատակ յաւէրժական
Վաղաթարշամ թոռմած կեանքիս ·

Պիտի ննջեմ, ահ, անյարիր,
Գաղջ ստուերաց աշխարհին մէջ,
Պիտի թռչիմ անտի արագ
Ի՛ թեւս թեթեւս ճախրասլաց՝
Դէպ ի՛ Եդեմն Երանութեան,
Դէպ ի Կայանն յարաղուարճ.
Ո՜հ. պի՛ թողում Սիրելիներս,
Հոգւոյս սրտիս բեկորները։
Հրեշտակներ. Ք՝ սրտիս մէջ՝
Այսքան շուտով ետուք խամրել,
Ցուսոյս. ըղձից չքնաղ ծաղկունք,
Անմահութիւն. բաց թեւերդ,
Թեւերդ ոսկի եւ լուսաթիւռ,
Մոռցուր ինծի զ՝աշխարհ, զ՝արեւ,
Մոռցուր կեանքիս քաղցրութիւնն։
Ո՜հ, ի՛ Հեբրոս, եւ ի՛ Լեսպոս՝
Գնացէք խնդրել Որփեայ քնար,
Նա լոկ գիտէ զ՝Եւրիդիկէն՝
Ի՛կեանս, ի՛ լոյս վերադարձնել։

ՍԵՒ ՕՐՈՒԱՆ ՄԸ ՏԽՈՒՐ ՑԵՍԻԼՆ

Օր մ՝էր, ահ, ինչ սեւ օր էր այն։
Արեւն անգամ՝ ահ, տխուր էր.
Ինչպէս երբեմն երբ Մեսիա,
Ի՛ քառաթեւ Կախաղանին՝
Տառապալիր հեւար, քրտնէր,
Հողմունք՝ ի՛ ջայլ կ՝հեծէին.
Աչքերու մէջ՝ լոկ արցունքը,

Սրտերու մէջ՝ լոկ հառաչը.
Դիմաց վրայ՝ լոկ սեւ Սուգը՝
Ունէր հեշտանք այն սեւ օրը։
Ճերմակ բօթ բօթ Ընկ-ելեր-ու մէջ
Գոգջիր պատկեր մ՝էր զետեղուած՝
Նա պատկեր չ՝էր, գոգ երկնային՝
Ճառագայթ մ՝էր հոն ծրարուած.
Բացին դէմքը, պէտ՝-ք պեսէլ.
Իմ անուշիկ աղբարիկս էր.
Դեղին առել էր ճակատը։
Վառ այտերուն, վարդը թոռմած.
Լոյս աչերուն լոյսը մարած.
Թաթիկները անշարժ էին.
Այն թաթիկներ՝ որոնք ինձ հետ.
Հազար ու մէկ խաղեր կընէին.
Ուրիշ անգամ ան կ՝երգէր ինձ։
Հիմիկ սեւ սեւ շատ մը մարդեր,
Ո՜հ, ինչ տխուր շարականներ
Նորա վրայ կընթեռնուն որ.
Ո՞հ, կապեցին կնպկպեցին
Իմ սիրելի աղբարիկս.
Ինձ թուէր թէ մայրս նորէն
Ջ՝նա յ՝օրան պիտի դնէ.
Բայց մայրիկս իրեն անոյշ
Օրօրին տեղ՝ արցունք թափէր։
Ո՜հ, հասկցայ թէ աղբարիկս
Ա՛լ մեռեր է, թաղել տանին.
Է՞ր եւ ես չուտ այդպէս, ե՛ղբայր.
Թողուլ վերժին՝ առանց եղբօր.
Առանց սրտի թողուլ է զ՝ինքն։

Եղբայր · դուն իմ սրտիկս էիր ·
Եղբայր · դու իմ հոգիս էիր ·
Սիրտս ու հոգիս ալ յաւիտեան
Պիտի մնան սեւաւորուած ·
Երբ արեւը մարը մտնէ ,
Եւ կամ նորէն ծագի այգուն .
Երբ գարունը ծաղիկ բանայ ,
Կամ գիշերը լուսին ծագէ ·
Գիտցիր եղբայր · որ Ռուբիկդ
Գերեզմանիդ վրայ ծռած
Սգամրմունջ պի՛ կողկողէ ,
Վերժինն այլ եւս ոչ այլ ինչ է
Բայց կայլակ մը լոկ դառն արցունք
Իւր եղբօրը յիշատակին
Վրայ ց՛կեանս կաթկթող ։

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ ՕՐՀԱՍԱԿԱՆ ԿՈՒԱՍԻՆ

Ծաղիկ մ՚էի · տեսի գարունս ,
Ահա թոռմիմ վաղաթարշամ .
Ջահիկ մ էի լուսապայծառ
Վերայ կենաց Աշտանակին ,
Ո՜հ , առ կայծեալ ահա մարիմ ,
Է՞ր այնչափ շուտ կը թոռմիք դուք
Իմ անապակ վայելց վարդեր ,
Հիմ այսպէս շուտ սահիք արագ ։
Երջանկութեանս սուղ ըսպպէներ ·
Դեռ կենացս լի է բաժակ ·

Դեռ կայտառ են սիրտս ու հոգիս ։
Կենաց խնջոյքին մատաղ կոչնական՝
Նոր նոր խրախուսնք կ՚սպասեն դեռ ինձ ,
Աւաղ կ՚հնչէ ահա վերջին ժամս .
Նմանիմ պիտի ես այն տերեւին ,
Որ ծառին բունէն դեռ նոր փրցուած՝
Հողմերու ձեռքը խաղալիկ եղած՝
Վարի ի՛ կոծ՝ ի՛ ձոր մահուան .
Արեւ՝ դու որ երբեմն քո լոյս
Նշուլառատ կ՚ուղերձէիր
Իմ ճաճանչուն ծաւալ աչաց ·
Շիրմիս վրայ փայլէ՞ այլ եւս ։
Ահա երթամ · քորք եւ եղբարք ·
Երթամ հոն՝ ուր դնացին հոգիք ։
Մնաք բարեաւ . Արեւ . Աշխարհ
Մանկիկ հոգւոյս բոլոր իղձեր՝
Իբրեւ ծուխեր՝ հոն ցնդեցան ։
Հողմեր՝ դուք որ խնկէք զայեր ,
Ալիք՝ դուք որ խրչէք զափեր ,
Ծաղկունք՝ դուք որ փթթիք գարնան .
Արշալոյսեր՝ որ կ՚փայլիք
Պահեցէք , հոն , իմ յիշատակս ·
Ո՜հ պահեցէք զայն միշտ ի ձեզ ·
Եւ դու , լուսին արծաթափայլ
Աստուածավառ լապտերդ երկնից ·
Ե՜կ , պատկառուկ շիկնոտ դիմօք ,
Թրջել շիրմիս ցուրտ մարմարը ·
Եւ դուք , մատղեր , ամէն գիշեր
Ձեր մտերմին շիրմին վրայ
Կաթկթեցէք ձեր չթիկներ ·

Շիջաւ կենացս առաւօտը
Ի մէջ շիրմաց վերջալուսին ·
Հողմեր · ընդ միշտ զիս հեծեցէք ·
Ծաղկունք · ընդ միշտ զիս բուրեցէք ,
Արեւ · ընդ միշտ զիս շողշողա ,
Գարուն · միշտ զիս գալարացուր ,
Իսկ դուն · նսեմ · խո՜ր գերեզման ,
Քու գիշերոյդ մթոյն միջէն ,
Յարո՛ զիս կեանս՝ որպէս յառնէ
Դա լուսնկան ստուերց միջէն ,
Մի լայք վրաս եւ մի սգաք ·
Հոգիք սգոյ եւ արցունքի
Եւ մորմոքի չունին ընաւ պէտք ·
Բաւ է վասն իմ չնչիկ մ՝աղօթք ,
Սգանարօտ փունջ մը ծաղիկ ,
Իբրեւ վերջին նուէր շիրմիս ։

ՔՆԱՐ

Ո՛վ սրտերու վսեմ թարգման .
Սիրտս անբիծ , հոգիս մանկիկ .
Իւր ըղձերուն անոյշ խունկերն
Բեւ առ Աստուած յղել անձկայ ։
Քանի խնդից զուարթ ձայնիւք
Թրթռացին լարքդ · լարք սիրադողդոջ
Քանի քանի գաղտ արցունքներ
Թրչեցին քոյդ թելք բեկբեկուն
Դուն իմ վշտաց ու խնդութեանց

Գաղտնիքն ի քո կրեա ծոցին ։
Ոչ թէ միայն մահկանացուք
Բեզմով սիրեն աստ դրուատիլ ,
Այլ Անմահքն իսկ կը քաղցրանան
Բեզմով յերկինս սրբասացուիլ ·
Երբ սիրտս հեւայ վշտի մը տակ ,
Եւ տխուր յուշք , յոյզք խռովեն զիս,
Մատներուս տակ թրթռալովդ
Զուարթ էակ մ՝իսկոյն դառնամ ։
Հնչէ · քնարս , հնչէ սիրուն ,
Լարերուդ մէջ քանի սրտից
Գաղտնիքները ծրարուած կան ։
Քո մէն մի թելքդ՝ մէն մի թեւ են ·
Որով հոգիք միշտ կ՝թռչին
Դէպ ի Եդեմն անմահութեան ։
Երբ դուն երգես · երգես անոյշ ,
Արցունք փոխուին ժպիտներու ·
Եւ իմ հոգիս քու ձայնովդ
Կը սիրէ միշտ յերկինք թեւել ։
Է՞ր այժմ այդպէս սգալուիկ
Կաս , թռչնախօս վսեմ քնար ,
Ստուերք Նախնեաց մամռոտ Շիրմէն
Խնդեռանդն վեր վազէին
Որփէնուագ դաշնակներովդ ·
Կամ խայտային յաճիւնս իւրեանց ·
Հայք կան մնան քո թրթռմանցդ ·
Է՞ր այժմ համակ ի՛ լուռ · ի՛ սուգ ·
Ահա հնչեն հողմունք ի՛ սոյլ ,
Ահա ալեակ խաղայ յ՝եղեր ·
Ի ճիւղ սոխակ դայլայլէ հեշտ ·

Ահա ծաղկունք մորչք հոյլ ի հոյլ
Փթթին հիւսել պսակ ճակտիդ,
Բաւ, Հայրենիք, աղի արցունք.
Թացին զքո զարտեւանունս՝
Բաւ հառաչանք հրափետուրք
Առին թռիչ ի քո սրտէ,
Հնչեա, քնարդ արծաթալար.
Հնչեա, զարթո զխանդ. զեռանդ
Հայոց ի սիփուռս վտարելոց։
Հնչեա զնուագ նոր աւետեաց։
Հայք ի քառից ծագաց երկրի
Սիրելաբար եւ անդանդաղ
Առ քեզ ի յոյս դիմեցին վաղ.
Հայաստանու հին Մուսայից
Թէ վարժ մատունք ոչ դոն սերկեան՝
Ահա աղջկունք ի պար ի խումբ
Դան ի սիրոյ քոց աղիտից։
Դան արդ ի լուր քոց նուագաց՝.
Հնչեա. քնար, եւ փարատեա
Ի մեր սրտից ծանրաթախիծ
Զկսկծանս եւ զմորմոքս.
Թելիցդ ի թինդ թինդս առցեն՝
Հայոց թմրեալ սիրտք եւ հոգիք։
Բաւ հեծեծես յ'ստուերս չիրմաց.
Վառեա զսիրտս եւ զհոգիս,
Ի սէր մեր հէգ, որք հայրենեաց,
Զարթո ի մեզ ազատութեան
Զձայն վեհմ եւ զզգացումս։

ԼՈՒՍԻՆ

Գիշեր է, ամէն ինչ կը լռէ·
Թարթիչք ամէն խոնջք քաղցր ի՛նիրհ·
Ոգիք ամէն լռիկ մնջիկ,
Ցածին յ՚Եդեմն հեշտ երազոց·
Թռչնիկն՝ տերեւն իւր բոյն ընտրած՝
Հանգչին ճագուկքն իւր թեւոց տակ։
Երկնից երեսն վառ վառ ցանուած
Այն գոհարեայ ժպտուն աստղեր·
Որ կարծես թէ երկնից միջէն
Ցերկիր խոնարհ պլպլացող
Հրեշտակներու աչուկներ են։
Եւ կամ մթոյն քայլից վերայ՝
Ցանուած ոսկի աւազներ են։
Տեսնես անդին մթեղ մայրեաց
Սեւ թիկունքէն արծաթափայլ՝
Կը համբառնայ լուսնակն մաղձոտ,
Եւ իւր շողերն սիրէ դեհ դեհ.
Զ՚գիշերայն մոլորելոյն
Ց՚երկնից կախուած լուսապաղպաջ
Աստուածավառ մեծ փարոս մ՚է·
Եւ հոգիներն քաղցր երազով՝
Կը վերամբառնան դէպ ի՛ յԱստուած·
Գիշեր մ՚է աշխարհ, երազ մ՚է կեանք,
Նիրհել մ՚է ապրիլն, եւ մեր հոգիք՝
Այդ գիշերէն, այդ երազէն՝
Այնպէս պայծառ ու լուսաւոր՝

Պիտի յառնեն, 'զարթնուն օր մը՝
Գերեզմանին միւս եզերքը·
Ինչպէս լուսինն ու բոց աստղեր՝
Համապայծառ յառնեն վսեմ։

ՏԽՈՒՐ Է ԿՈՑՍ

Է՞ր վարդ ճակատդ լուսահրատ
Նոճեաց ի՛ փունջ սեւազարդած,
Հեծես տխուր եւ լալագին·
Ժպիտն է զարդ վարդ հասակին·
Արցունք վշտաց դառնութիւն մ՚է,
Ինչո՞ւ վշտաց տխուր ամպեր
Լուսոյ լճերդ, ո՜հ, կ՚ամպոտեն·
Քու այդ վսեմ ծաւի աչերդ՝
Ուր կը լողան անմեղութիւն·
Ամբիծ խոկմունք վսեմ ու լուրջ,
Հիմ արտասուաց մէջ թաթխուին·
Կոյս, դու վարդ մ՚ես, առանց փուշի,
Կոյս, դու լոյս մ՚ես, առանց սաւառնի,
Դու էակ մ՚ես առանց մեղաց,
Հրեշտակ մ՚ես, որ թերեւս
Ց՚երկնուստ յ՚երկիր տարագրուած,
Մի՛ լար, ո՜հ, կոյս երջանիկ ես·
Երջանիկներ չ՚ունին արցունք,
Ո՜հ, թող չ՚հալի անմեղ հոգիդ,
Ցաւոց աղի արցունքին մէջ։
Ո՜հ, փայլէ միշտ մութ աշխարհին

Մարախլապատ երկնից վերեւ ·
Որպէս փայլի դա լուսնկան՝
Սա պաղպաջուն երկնից ի՛ կող ,
Կո՛յս , ճակատդ նոր երկինք մ՚է ,
Թող հոն երբէք ամպ չ՚տեսնէ ,
Կոյս , քու աչերդ հրեշտակաց
Զոյգ մ՚անապակ հայլիներն են ։
Թող արցունք զ՚այնս չ՚պղտորեն ,
Քալէ , ո՛ կոյս , փուշն ու քարը
Ա՛լ ոտիցդ չ՚են երբէք խոչ ·
Զգա · որպէս կ՚զգայ հրեշտակն՝
Վերն՝ Աստուծոյ թեւոց ներքեւ ։
Խօսէ , մի՛ լար , ժպտէ , մի՛ լար ,
Լայն՝ այս փշոտ աշխարհիս մէջ ,
Թշուառներուն լոկ բաժինն է ,
Երջանիկներն միշտ կը ժպտին ,
Ժպիտ՝ բաժինն է երջանկաց ։

ԱՂԲԵՐԱԿՆ ԱՆՏԱՌԻՆ ՄԷՋ

Լուսակարկաչ քաղցր աղբերակ ,
Ի՞նչ վճիտ են գլած ալիքդ ,
Սիրէ նշոյլն նայիլ ի՛ քեզ ,
Սիրեն ստուերք լիւղել ի՛ ծոցդ ,
Ականակիտ հայելւոյդ մէջ ,
Ցոլայ ծաղկանց չքնաղ պատկեր ,
Սիրեն շուշանն ու մանուշակ ,
Ափերուդ քով ծիլ , ծիլ բանալ ։

Երբ մարգերուն ծաղկագորգին
Կամ դալարաց թաւշին վերայ ·
Ծաւալանաս դոնդող առ դոնդող ,
Ակնավճիտ կազմես բիւրեղ ·
Ուր երկինքին փայլի կապոյտ ,
Որպէս կուսին յ՚աչս ծաւի՝
Փայլի պատկերն հրեշտակին ·
Սիրէ թռչնիկն առ եզերքդ ,
Ման գալ , բուծել զ՚իւր ջերմ պասուք ,
Ծաղկունք մնան քո ալեկացդ
Պճնել յուռթի ի՛ մորչ ծղօտ ,
Ո՛հ , քու ալեաց նման սահուն
Պիտի գնան եւ իմ օրեր ,
Ի՛յովկէան անդ ապառնւոյն ,
Տես , քո ալիքդ այնչափ սիրեն
Լուսացնցուղ քո ակունքը ·
Որ գոգ չ՚ուզեն մեկնիլ անտի ·
Աստուած , եւ զ՚իմ սրտիկն անմեղ
Պահեա ընդ միշտ ջինջ եւ խաղաղ ·
Որպէս զ՚աղբերս վճիտ ալեակ ։

ԱԾՈՒՆ

Անցաւ գարուն , պճնումն դրախտից ,
Ա՛լ ծաղիկներ չ՚ունին բոյր , թոյր ·
Ա՛լ պարտէզներ չ՚ունին պաճոյճ ·
Ծառք ու անտառք տերեւաթափ՝
Հեծեն տխուր դէմ ցուրտ քամեաց ,

Լուռ է սոխակ զինչ վշտահար,
Կամ զինչ քնար աղէկտուր։
Պայծառ ցերեկն ու վաղորդայն՝
Ա՛լ մեզ չ՝տան պայծառ արեւ.
Մշուշ, մռայլ ու մառախուղ
Պատեն զերկին եւ մեր երկիր.
Բնութեան մէջ, ո՛հ, ամեն ինչ
Լռիկ մնջիկ լոկ կը հեւայ.
Տրտում տխուր է այդ բնութիւն,
Սգաւոր է եւ դալկադէմ,
Զինչ սա այրին լալաթառանչ,
Աչնան ատեն՝ բնութիւնն ամբողջ
Գոգ հոգեվարք վիճակ մ՝ունի.
Ոյր նուաղած աչացը մէջ,
Կենդանութեան բոլոր հրապոյրք՝
Գեղեցկութեան ամբողջ հմայք՝
Թօշնած դեղնած կան զրաւած,
Աչունն ամէն եղանակաց,
Մելամաղձոտն ու տխուրն է.
Դերեզմանաց գոգ ամիսն է,
Ուր ժպիտն իսկ գաղջ թախծում մ՝է։

ԻՂՁ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Ո՜վ մայր Հայաստան,
Մինչեւ ցե՛երբ դու այդպէս,
Հեծես վշտագին,
Օտար սոսթայ

Կարծր երկաթէց տակ.
Մինչեւ ցերբ այդպէս՝
Ի՝ լուռ եւ ի՝ սուգ
Համակ ի՝ թախիծ.
Ափդ ի՝ ծնօտ.
Արմունկդ՝ ի ծունկ։
Եղերերգես.
Բա՛ւ փչէ պսակ
Հիւսեն քեզ օտարք,
Բա՛ւ սեւ կտաւներ։
Նոր պատանք կարուին
Ապագայ փառացդ,
Ապառնի յուսոյդ։
Ահա այժմ աղջկունքդ
Վարդէ պսակներ,
Վառ ծիրանիներ։
Հիւսեն ու գործեն
Վշտահար ճակտիդ,
Ցաւակոծ գլխիդ,
Ո՜հ. իմ Հայաստան,
Մի՛ գիտնար բնաւ,
Թէ սիրտ մը չ՝կայ,
Որ միշտ քեզ սիրէ,
Թէ շրթներ չ՝կան
Որ միշտ քեզ երգեն.
Թէ շունչ մը չ՝կայ,
Որ միշտ քեզ հոծէ,
Հոս կայ շրթունք մը,
Որ միշտ քեզ երգէ.
Հոս կայ կարճ շունչ մը,

ԼԵՌ ԳՐԱԴԱՐԱՆ

Որ միշտ քեզ հեծէ,
Հոս կան զոյգ մ'աչեր.
Որ միշտ կը թրչեն
Տխուր յիշատակդ,
Հոս կան զոյգ մը քայլ,
Որ ըղձան դիմել.
Միշտ առ քեզ ի՝ սէր։
Ո՛վ իմ Հայաստան,
Զար թշնամիներն
Զքեզ խլեցին
Խեղճ Հայոց ձեռքէն։
Ո՛վ բարի Աստուած,
Ալ չ'բաւեց այնչափ
Հայուն գլխին եկած
Անթիւ խոշտանգանք,
Մինչեւ ց'Երբ այսպէս՝
Հայաստանէն զուրկ՝
Պիտի թափառինք.
Օտար երկիրներ,
Ո՜հ, ուր էր թէ
Երջանիկ օր մը՝
Աղատ ոտքով
Քեզ դիմէինք,
Մայր Հայաստան.
Ու սլինդ փարելով
Աւեր գրկացդ.
Ծնկերուդ վրայ
Ո՜հ, ալ անէինք,
Եւ Դու ալ ամբողջ՝
Մերն, այո՛, մերն ըլլայիր։

Եւ մեք, մեք ամենեքեանս
Այո՛, քուկդ, քուկդ ըլլայինք։
Ո՞վ իմ Հայաստան
Ըղձիցս Բուրաստան։

ԶՄԱՑԼՈՒՄ

Երեկոյ մ'էր լռիկ մնջիկ։
Կայի մենիկ ու միայնիկ,
Արձանացած յ'եզր ծովուն։
Ուր խորհելու հեշտութիւնը
Զ'իս վարած էր, յ'անգէտս ինձ,
Ծայրածաւալ ջուրց ովկէան
Պարզէր աչացս իմ առաջի,
Ալեաց զովուկ չըշունչին տակ,
Նոր եւեւեջ մ'յուզեր սիրտս,
Որչափ ալիք ծփէին ծով,
Նոյնչափ խոկմունք եւ նոր յուզմունք
Տատանէին մտացս Տապանն։
Լուսապաղպաջ երկնից վերեւ,
Արծաթափայլ յառնէր լուսնակ,
Ծաղկունք նոր խունկ, հոդմեր նոր զով.
Կը սփռէին բնութեան մէջ,
Միտքս ի՝ ցնորս եւ ի՝ յերազս
Ընկղուզած ու մոլորած,
Թռիչ մ'էի գոդ գլխովին,
Ց'Աստուած յ'երկինս կոյս վերթեւեալ

Կը տենչայի խանդավառեալ,
Սիրտս անծանօթ ղգացումով՝
Տեսիլի մը դեռ նոր փարած։
Զմայլանաց մէջ էր սուզուած։
Ցանկարծ հոգիս իմ երկնամոլ
Նոր ձայնով մը թնդաց ուժգին,
Որպէս թնդաց՝ իւր շիրմին մէջ,
Մերթ Ղազարու նստած ոգեակ։
Ի՛ ձայն փրկչին Տիեզերաց։
Կոյս մի տեսի նաղելաշուք,
Որպէս նախնի յաւերժհարսունք
Կը նկարուին պատկերաց մէջ,
Կ՚երգէ՞ր այն տեղ թէ կ՚արտասուէր,
Բայց իւր պարկեշտ գլխիկն ի՛կախ,
Կքած ծռէր քնարին վրայ,
Քովը գնացի, ողորմ տեսիլ,
Ծաւի խարտեաշ իւր աչերէն
Ոլոռն ոլոռն կը կայլակէր
Աղի լեղի գերարտօսրը,
Խշխշաց սիրտս, լուծա՛յ յ՚արտօսր։
Ի՞նչ անծանօթ վշտերու տակ
Ճզմուած սիրտը կը գտնուին։
Էր՞ դառնագին կ՚ուլաս այդպէս
Կոյս դու անմեղ եւ նաղելի։
Ներեա, կուսանդ դու այցելու,
Չէ թէ կ՚ուլամ, այլ կ՚զմայլիմ
Սա բնութեան հիահրաշ
Ահեղաշուք թատեր վրայ»։
Մինթէ յակճիռն արցունք չունի։»

ՄԱՆԻՇԱԿ

Ա.

Ո՛վ մանիշակ գեղաձին,
Ընդէ՞ր այդպէս գլխիկոր,
Նայիս ընդ միշտ սեւ հողին,
Վերցուր դամ մի կոր գլխիկդ,
Նայէ՛ երկին ինչ պայծառ,
Եւ արեւը ինչ վառ է,
Կուգայ սիրել ճաճանչներ։
Նոր հոգի տալ թառամ ծաղկին։
Բոլոր ծաղկունք արդ զարթնուն,
Եւ կ՚ողջունեն զ՚բնութիւն։
Ո՛վ մանիշակ, մանիշակ,
Դու ալ վերցուր գլխիկդ,
Սթափէ՛ ալ խոր քնէդ։
Ընդէ՞ր այդպէս չուտ թոշնիս,
Մինթէ տեսնէ՞ր մի ծաղիկ։
Որ երեւէր գեղագոյն
Քան զգեղ քո սիրաբուն,
Մինթէ տեսնէ՞ր մի ծաղիկ՝
Որ բուրէր աստ չատ հեշտալի
Քան զբոյր քո խնկաւէտ։
Ո՛չ, գեղանազ մանիշակ,
Մի թարշամիր միշտ բացուէ,
Ընդ միշտ սիրեմ ես զքեզ,
Քու բուրումդ ու թուրումդ
Բացուի եւեթ իմ սրտիկ։
Բացուէ՛, բացուէ՛ մանիշակս

Թէ թարշամիս դու հիմիկ
Ես ալ հետդ, ահ. հիմիկ . . . . . :

Բ

Ամեն անգամ երբ ի՛ քո դէմ
Հայիմ ընդ միշտ ես այդուն՝
Տեսնեմ ի՛ քեզ զ՚իմ մեղմ պատկեր :
Ճիշդ ու ճշգրիտ անդրադարձուած .
Ծաղիկ սիրուն ու պատկառօտ
Ինչո՞ւ այսպէս սրտիս վերայ
Կազդես ու զ՚այն կը յուզես միշտ .
Ես ալ՝ քեզ պէս՝ միշտ կը սիրեմ
Բացուիլ գարնան եւ բուրել. գաղտ .
Քեզ պէս պահուիլ եւ թողուլ որ՝
Աշխարհ համայն լոկ լսէ ձայնս .
Ինչպէս քու բոյրդ միայն կ՚զգայ ,
Քեզ պէս ես ալ կը փափաքիմ
Որ ընդ այդուն լուսապսակ՝
Արեգակին առջինեկ շողն
Աչերս ու դէմքս գգուէ սիրով ,
Կղձամ որ միշտ զովուկ հովիկ
Գանգրագեղ գռուզ գիսակս
Իւր խնկահոտ թեւիկներով
Սիրածածան ծածանէ միշտ ,
Ծաղիկ սիրուն ու շառաղնոտ ,
Դուն երկնքին գոյնը ունիս ,
Անմեղութեան դու պատկերն ես ,
Քեզմով հիմիկ ես հասկցայ
Թէ աշխարհի փուշ—մեղաց մէջ ,

Առ ի լինել անբիծ , անմեղ
Պէտք է ընդ միշտ մընալ անհուպ
Եւ անմատոյց այս աշխարհիս :
Ով մանիշակ . մանիշակ իմ ,
Ծաղիկ չիկնոտ , անմեղունակ ,
Սիրտս ի՛ քեզ յանկուցանես ,
Ո՜հ , մի թոռմիր , ջուր տամ ափովս .
Ո՜հ , մի պաղիր , ահ , մի ցամքիր
Շնչիկովս կը սաքցնեմ ,
Արցունքովս քեզ կ՚ոռոգեմ .
Դուն ալ՝ ինձ պէս՝ մէկ արեւ մը
Նոյն մթնոլորտն ու կլիման
Ունիս վերեւդ եւ կենսատու ,
Երբ դուն թոշնիս , ո՞վ ինձ լինի
Ծաղիկ անմեղ եւ ամօթխած ,
Զինչ հարսնուհին դա գեղատի .
Հոգիս , սիրտս ալ իւր օժիտը
Քեզ ընտրած է , քեզ սիրած է .
Գոհար , ակունք եւ ոսկիներ
Զ՚ունին ճակտիս՝ կուրծքիս վրայ
Այնչափ վսեմ ու պերճ պարծանք ,
Որչափ ծաղիկ դուն երկնաբոյր ,
Երբ քեւ փունջ մը կապած սիրուն՝
Կրեմ ճակտիս ի՛ զարդ անգին ,
Զէ . Զէ ծաղիկդ իմ մանիշակ .
Թոռմէ երբոր թոռմի կեանքս .
Ե՜ւ ինչ յայնժամ չիրմիս վերեւ ,
Բացուէ , բուրէ , եւ աշխարհի
Դուն հոչակէ ծաղկելովդ՝
Թոռմած կեանքիս ցիշատակը :

ԿՈՉԱՆ ԱՌ ՄԱՅՐՆ ԻՐ ՄԵՐՁ Ի'ՍԱՀ

Ահա կեանքիս մարի արեւ,
Մահուան անլուր վրէին եղբը,
Ահա սրտիս փչրի քնար.
Բիրտ ու կարծր չիրմին քովիկ.
Մայրն իմ զանգակն եկեղեցւոյ
Կեանքիս վերջին ժամը գուժէ.
Ծանր հատկլեալ տխուր թնդմամբ,
Ինչու՞ չորսդիս թրչեն թարթիչք,
Ինչու՞ արդեօք լինիմ ես այժմ,
Դոցա թախծօտ թաց աչերուն
Աղիողորմ մի առարկան,
Բայց ինչ կ'զգամ, կ'աղօտի այդ,
Նեղնայ աչքիս լայն հորիզոնն,
Ես իմ մէջս կը թեթեւնամ.
Գոգ՝ բազկաց տեղ՝ թռիչ կ'ուտան,
Երկնից զուարթ պատշգամէն,
Լուսափեռուր հրեշտակներ
Ձիս կը կոչեն անձկակարօտ.
Ճակտիս ի'հիւս բոլորելու
Դա անթառամ պերճ պսակը,
Է՞ր, Մայր, նայուածքս եւ այս անգամ
Չ'են ընկղմիր աչերուդ մէջ,
Մայր, ալ աշխարհ ջնջի ահա
Իւր բիւր զուարթ հմայիցն հետ.
Մայր, քոյր, եղբայր, Մնաք բարեաւ
Ահա անդարձ մեկնիմ ի՛ձէնջ.

Ճառագայթներ, վերջին նայուածքս.
Ձեր շողերուն հետ խառնելով
Ամէն առտու՝ երբ որ ծագիք,
Ի՛յիշատակ իմ նայուածքին,
Շողացուցէք կարօտաշող
Իմ սիրելեացս աչերուն մէջ.
Զեփիւռ, վերջին միակ շնչիկս
Քո շշշունչն հետ խառնելով
Ամէն առտու այդէն առաջ՝
Եւ երեկոյն՝ հետ լուսնեկին՝
Տար զայն տիռէ ու հրծրծէ,
Իմ սիրելեացս յ'ունկն՝ ի' խոնարհ.
Տար, տարածէ վերջին ըղձերս,
Հոն՝ ուր տերեւ. ծաղիկն եւ երգ
Զմայլանաց կազմեն դրախտ,
Մայր իմ, գրկէ զ'իս ուժգնապիրկ,
Զիս քո գրկէն խլել կ'ուզեն,
Սա վեցթեւեան Սերովբէներ,
Մայր, ճակատս, գլխիկս եւ դէմքս
Բեր, ծրարեմ վերջին անգամ
Ծոցիդ, գրկիդ, ափերուդ մէջ,
Մի՛ լար, մայր իմ, մի՛ լար վրաս,
Լալը եւ եւս դառնացնէ
Իմ կենացս վերջին րոպէն,
Շունչ մը մնաց շրթնեակիս մէջ,
Հեւք մը միայն չոր կուրծքիս մէջ,
Կեանքիս թատրին հուսկ Արարին
Վերջին տեսիլն կ'աւարտի որ,
Մնաք բարեաւ, մայր. քոյր, եղբայր,
Մնաք բարեաւ շող, վարդ, երգ, իղձ,

Ահա իջաւ ողորմ կենացս
Աղիողորմ ողբերգութեան
Վերջին անբաց վարագոյրը,
Ո՜հ, ինչ ցուրտ է գերեզմանը,
Պաղ քարին տակ սառուցեալ մարմինս,
Թեւ տուք, Բերովբք, թեւ տուք թռչէ
Աստուածատենչ իմ կոյս ոգեակ.
Ողջոյն Աստուած, Ա՜նմահութիւն . . .
Անխախտ. անքակ, անվերջ, յաւերժ
Մշտաղուարճ Կայանդ Հոգւոյս։



ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

ՕՐՀԱՍԱԿԱՆ ԲԵՐԴՈՂՈՒՀԻՈՑՆ

Մնաք բարեաւ, Արեւ, Աշխարհ, եւ դու սիրազատար կեանք. Հոգիս Յաւիտենականութեան հետ կը հրծծէ։ Քնարս՝ որ յաճախ իմ սիրելեաց յուզարկաւոր գնաց, Քնարս՝ որուն թելերն յաճախ արցունքներովս թրջուեցան, Ա՛յն եւս ձեռքէս ինկաւ, փշրեցաւ. ժպիտն աչացս մէջ. ձէնիկն շրթանցս վրայ, զգացումը սրտեկիս, մտածումը հոգւոյս մէջ ցամքել սկսաւ։ Ահա կենացս Արեւն՝ գերեզմանաց անդունդին մէջ կը մարի. ինչպէս՝ կը մարի ճառագայթը երեկօրեան սարից ետեւ։ Սերովբներ՝ իրենց Տաւիղը մատանցս տակ կը

զետեղեն։ Մարդ եմ, բայց հոգիս կարափի նըման է, որ յ՝աւանդեն յետին շնչիկին՝ կերգէ։ Հոգիս՝ ահա՝ կը թռչի յ՝ինէն՝ այնպէս՝ ինչպէս կը թռչի խուռնկը ծաղիկէն, ինչպէս՝ կը թռչի նուագը քնարէն, բարբառը շրթներէն։ Շնչիկս ահա մարելու վրայ է, ինչպէս զեփիւռը, նոյնպէս եւ իմ շնչիկս՝ իւր նուագած ատեն՝ հեշտասոյլ շըշունչ մ՝է։ Կեանքս՝ այո, գերեզմանաց եզերքը՝ մահուան ապառո՛ւմ ժայռին վրայ՝ ահա պիտի փշրի, բայց ինչպէս քնարը՝ իւր փշրած ատեն, սոխակն իւր լռած ատեն, ճաճանչը մարած ատեն, ճըրագն իսկ իւր չիջելամերձ առկայծման ատեն, եւ եւս սխրալի, տարփալի, տարածուն ու զգայուն են, նոյնպէս եւ իմ հոգիս՝ իւր տարաժամ օրհասին ատեն։

Այլ եւս, ի՛բայ մնդր ցնդեցէք յինէն, ով կենաց խաբուսիկ երազներ, ոսկեղէն ամուրջներ։ Համբաւ, փառք, երջանկութիւն, կենաց դրախտին մէջ, ինչ դիւրաթառամ ծաղիկներ էք. վայելք, խնծիղք, դուք որ կենացս դալարութիւնն ու պաճուճանքն էիք, թօթափեցա՛ք, թառամեցա՛ք, ինչպէս թառամեցան երեկ ձեռացս մէջ սա վարդերը։ Կենացս դարունը՝ ինչ՝ ծաղկապսակ էր։ Կեանքս յոյսերու, երանութիւններու Որորան մ՝էր։ Սիրտս պայծառ էր, նման արշալուսոյ, հոգիս զմայլում մ՝էր։ որ երեկոյեր մելամաղձոտ լուսնկային ոսկի նշոյլներուն պլլուած՝ դէպ ի՛Բարձրեալն ամբառնալ եւ Անոր փարիլ՝ հոն

ընկլուզիլ կ'ախորժէր։ Ամէն գարուն՝ անցած տեղն վարդ մը թողուց ճակտիս վերայ, փուչ՝ երբէք։ Ամէն աշուն՝ իւր դալուկին տեղ՝ սրտիս բաժակին մէջ վսեմ զմայլանք մը կաթեց։

Մնաք բարեւաւ, ով իմ հոգւոյս փարելի տեսարաններ, դո՛ւք այլ եւս նայո՛ղ աչերու հրապոյր ու հմայք ունիք։ Ա՛րեւ՝ ալ գերեզմանս նշուլէ, Ա՛ստղեր, ալ գերեզմանիս վրայ ցողեցէք, ծաղկունք, չիրիմս պճնեցէք, բարեկամք։ Ցիշատակս պատուեցէք։ Զի՝ ոչ եւս է Ինարուհին . . .։

ՄՐՄՈՒՆՋՆ ՕՐԵԼԱՑ Ի ԴՐԱԽՏԻՆ

Որ հրէղէն ետուր գնտից
Գլել լիւղել ի՝ մթնոլորտ ։
Եւ ի՝նչոյլս ոսկեփնջիկ՝
Զմութն ի՝ լոյս մերկել պայծառ ։
Որ ուսուցեր փողերդ հաւուց
Ի՝ դայլայլիկս ճռուողաձայն՝
Զանունդ ի՝ թուփս անդ գեղգեղել ,
Առուին դդչել լուսակարկաչ ,
Ընդ ծիծաղկոտ բլերս ի՝սահ ,
Հեշտամրմունջ խնկոտ հոգմոց
Ընդ վէտս ալւոյն , ընդ հեզ ծաղկին
Շշնչել յար ի՝սոյր , ի՝սոյլ ։
Շանթից ամլոց գոռ որոտալ ,
Թփոց պճնել դիպակազգեստ ,
Ոստոցն ի՝պտուղս եւ ի՝ծաղիկ ։
Ծաղկին բուրել , թերթից գունել ։
Ովկէանու կոհակաւէտ
Զամբաւութիւն քո հռչակել ,
Ուսո՛ եւ այժմ իմ չրթնեկաց
Պարզել ի՝ձայն նոր բարբառոյ ,
Առնուլ օրհնել փառատրանօք
Զանունդ Քո , զանունդ–ԱՍՏՈՒԱԾ ։
Որ ի՝յերկինս՝ փայլի ընդ աստղս ,
Ց՝երկրի՝ ի՝ թատրս բազմատեսիլ
Զքնաղ բնութեան՝ ի՝ տառս ծաղկեայ ։
Տո՛ւր իմ խոկմանցս երկնաթեւել
Ընդ սրտիս խղճս բոցափետուր ,

Որպէս խնկոտ բուրից , ինչոց
Ի՝ թեւս թեթեւս թռչուն թրթռուն ։
Տէր , տո՛ւր հոգւոյս մանկականի
Փարել ընդ միշտ զ՝գահոյիւքդ
Որ յամպս եդեր Յաւիտենից ։

ՎԱՐԴ

Ծաղիկ սիրուն ու գեղեցիկ ,
Զ՝որ կոյսն ի՝զարդ կրէ ճակտին ,
Քան զմանեակ գոհարելոյզ ,
Քան զ՝պէսպէսն մարգարտաշար ,
Ծաղկապսակ գոռ պերճ գարնան
Սիրափթիթ առջինեկն ես ։
Օրհնեա՛լ ծաղիկ , քեզ կը պճնի
Սուրբ սեղանոյն խորանն ու վայր ։
Վսե՛մ ծաղիկ , զ՝ուրդ դրախտին
Քեզմով Եւա՝ մայրն առջինեկ՝
Պճնեց դեղձան հերացն հոպոպ ։
Աստեղք իրենց արցունքովը՝
Եւ արշալոյսն իւր ցօղիկով՝
Գդուեն զքեզ սրտագորով ։
Վարդ՝ ինչ փափուկ ու նազելի ։
Քեզ գգուեմ կը թոռմիս , չը գգուեմ կը թոռմիս ։
Բացուիս կը բուրես , թօշնիս կը բուրես ։
Ո՛հ , բնութեան ճարտար մատին
Դուն հոյակապ ձեռակերտն ես ։
Շատ անոյշ ես , բայց փշոտ ես ,

Հոտոտեմ, կը խայթես,
Չ'հոտոտեմ, կը խայթես.
Բայց երանի՜ այն սրտիկին.
Թէ եւ խոցուի թէ արիւնի.
Հերիք է որ՝ վարդին փուչովը
Միշտ խոցոտի ու արիւնի։
Փափուկ վարդի մը փուշ ըլլալն ալ՝
Մեծ պատիւ է, եթէ լմնիմք։

ՍՈԽԱԿ

Անտառաց եւ օդոց չքնաղ երաժիշտ,
Ո՞վ ուսոյց քեզ ճլվլալ այդպէս,
Ո՞ր ձայնական գործի կարէ գալ ի՛ կշիռ
Գեղգեղանքիդ, երբ ի՛ թիթին դու վարդենեաց՝
Այն մորչ կանանչուտ տերեւոց տակէն՝
Հանես մրմունջներդ, մրմունջ անմման.
Որոց ի՛լուր կրթի յ'ապուշ ունկն ամեն,
Կարծես առաւօտն միշտ քեզ կ'սպասէ,
Որ զարթնու ձայնովդ. ձայնովդ երկնային.
Չ'բանար վարդը իւր կարմիր կոկոն,
Մինչեւ չ'լսէ նուագներդ անոյշ,
Բնութեան տաճարին երկնային Դպիր.
Երգերովդ օրհնեն ծաղկունք զԱրարիչ։
Քո այդ հոգետիւթ սուրբ մեղեդիներդ
Կ'արժեն Սերոբէից հոգեշունչ Տաւիղ։
Երբ լսեմ ձայնդ մելամաղձոտ,

Կ'բացուի սրտիկս, թէ ըլլայ տխուր,
Թունդ կ'ելնէ հոգիս, թէ ըլլայ լալն,
Ինչու անտառաց խորը կը թագչիս.
Քեզ համար ունիմ ոսկի վանդակներ.
Ե՜կ. հո՛ն հանգչէ դու, հոն երգէ խաղաղ,
Անգութ որսորդին մի՛ դուցէ զոհուիս,
Ինչու չը սիրես ոսկի վանդակներս,
Հոն բիւր գգուանօք գուրգուրամ վրադ,
Հազար դաշնակաց բիւրաւոր նուագք
Չ'են աղդեր այնչափ սրտիս դիւրազգած.
Զէնիկդ երբ առնում, ցնծում եմ ամբողջ,
Կարծես բնութեան սուրբ եկեղեցւոյն
Չ'Աստուածն օրհներգող մեծ Զայնաւորն ես,
Քեզմով բնութիւնը՝ վասն իմ՝ թատր մ'է՝
Եւ դուն այդ թատեր վեհ Երգեցիկն ես։
—Մի դիս փաղաքշեր, փափկասիրտ կուսան,
Իմ տաճարս է ծաղկանց քնքոյշ ծոց,
Իմ վանդակս է փչոտ վարդենին,
Չ'է թէ ոսկեղէն կամ գոհար վանդակ,
Արքայից արքունիքն անգամ թէ տաս ինձ.
Դարձեալ չ'եմ լինիր ես քեզի թռչնիկ.
Ես կ'երգեմ ծածուկ, եւ աշխարհ իմ ձայն
Լոկ հեռուստ լուեալ թող հեշտ մ'զմայլի՜։—

ՉՄԵՌՆ

Նմանատիպ այն ալեւոր ծերունւոյն՝
Կայ բնութիւն սպիտակահեր ի թախծանս,
Գոգ երկնատեղ գորգ եւ բեհեղ բամբակահիւս

Զ'ընութեան գաղջ երեսօք առեալ է բակ,
Ծաղիկ, տերեւ, թարմ եւ դալար դալարիք
Կարկտահար, եղեմախարշ եւ ձիւնածեծ
Հեծեն տխուր ընդ հոծ դիղօք սառնամանեաց.
Ամպք մոխրագորշք պատեն զ'երկնիւք մարախ-
լապատ.
Փշաքաղին ի'ցուրտ սարսուռ դնդերք մարմ-
նոց.
Ի'սառնաշունչ բարկ խիստ քամեաց հիւսիսին,
Ի'ցնցոտիս եւ ի'գրգռիկս երիթացեալս
Զոփայ մանկիկն դա տնանկին ցրտահարիկ,
Գոգ ընդ տարափս ձեանց ի'սառոյցս պաղին
եւ կան,
Առ առանին Վառարանին բարին Մեծ–Մայր
Շուրջ բոլորեալ զ'իւրեւ մանկտին զ'իւր ա-
ղածրի,
Պատմէ, վիպէ եւ աւանդէ ախորժանօք,
Զ'որ ինչ յայնժամ դժպիհ դիպաց անագորոյն
Ընդ ինքն եւ ընդ իւր Ընտանիքս գերերջանիկ
Անցուցեալ է դառնակսկիծ եւ վշտալի։

ՄԱՀ ԿՈՒՍԻՆ

Եկաւ հասաւ՝ այն վայրկեանը՝
Ցʼորում՝ տեսի իմ կենացս
Վառ ճրագին չիջանիլը.
Ա՜հ. կը մեկնիմ եւ ես ի՛ Զէնջ,
Ահա կենացս քաղցր հաճոյից՝

Դառն օրհասին յաջորդեն վիշտք.
Պի՛ բաժնուիմ եւ ես ի՛ Զէնջ.
Պի՛ բաժանուիմ՝ այլ կը՞մաղթեմ.
Որ դուք յենուք յ'ալեւոյթ խոր.
Ա՜հ, ինձ նման՝ չ'գրկէք չուտ
Մահուան անսիրտ պաղ մարմարը.
Ո՜հ. դեռ աչերս նայիլ ըղձան,
Զ'ուղէն լռել սրտիս տրոփք,
Զ'ուղէն դադրիլ չարժք երակացս.
Մատաղ կենացս Աշտանակը
Դեռ շատ ջահեր ունէր տեսնել։
Գարնան ծաղիկ մի է իմ կեանք.
Որ պի՛ բուրէ յետ թօշնելոյն.
Ո՜հ, ալ գիշերն՝ երբ լուսնկան
Արծաթ, ոսկի ցանէ յ'անտառ,
Երբ շաղ ու շող կաթէ յ'ստուեր,
Ո՜հ, ո՛չ այլ ես պիտի փայլի
Աչերուս մէջ կամ զ'իմ դիմօք.
Ո՜հ, ալ արեւն չ'պի՛ տեսնէ.
Իմ ստուերիս երկայնիլը.
Ա՛լ անտառներ չ'պիտի կրկնեն
Իմ երգերուս արձագանքը։
Ա՛լ դաշնակը չ'պիտի թնդայ
Ճապուկ մատանցս ներքեւ ի՛ խինդ.
Ո՜հ, ա՛լ գարնան չքեղ ծաղկունք
Զ'պսակեն պիտի ճակատս։
Ո՜հ, ալ մեր տանն ա՛եկեղեցւոյ
Սիրուն սեամբ ո՛չ ես երբէք
Պի՛ ընդունէ քայլիցս ողջոյն։
Ո՜հ, երազներս ու յոյսերս

Պիտի մարին, ինչպէս մարին
Ճառագայթներն իրիկուան դէմ՝
Արեւմուտքի Սարին ետեւ.
Ո՜հ, փափաքներս ու փառքերս
Պիտի դեղնին ու թառամին,
Ինչպէս դեղնին ու թառամին
Աշնան ծաղկունքն ի՛ դրախտին։
Ո՜հ, Աստուած իմ, ճակտիս վրայ՝
Հազիւ տասը պերճ գարուններ
Իւրեանց վարդեր պսակ դրին։
Տէր, դեռ կենաց առաւօտուն՝
Պէտք է թոռմիլ, ո՜հ, տարաժամ.
Տէր, ծաղիկ մ'եմ, թոյր, բոյր կուզեմ,
Տէր, նշոյլ մ'եմ, լոյս, ջեր կուզեմ,
Ապրիլ կուզեմ, շնչել խնդրեմ.
Տէր, մի մարեր մատաղ կենացս
Լուսապայծառ բորբ փարոսը։

ԿՆԱՐ

ՕՐՀԱՍԱԿԱՆ ԿՈՒԱՍԻՆ

Աւա՜ղ, բեկա՜ւ կեանքիս բաժակ,
Ամէն անգամ չունչ առնելուս՝
Կեանքս յ'ինէն ձիգ հառաչով մը
Փախչի անդարձ եւ անտարբեր։
Եւ մահուան թեւն՝ Եկեղեցւոյ
Սուրբ զանգակին վրայ զարնէ

Մի հատկլեալ եւ ընդհատեալ
Կեղերջով մը վերջին ժամս։
Ո՜հ, գիտեմ թէ՝ եւ իմ չունչը
Զինչ սա հոգմիկ՝ պի՛ նուաղի,
Կճնուոյն տխուր ստուերին մէջ։
Մնաք բարեա՜ւ, դուք հարազատք.
Սրտիս, մտքիս յոյզքն ու յուշքը
Ձեզ Ցիշատակ թողում միայն.
Ցիշեցէք զիս, երբ Արեւս
Սա հորիզոնն ողջունէ միշտ.
Ցիշեցէք զիս, երբ Գարունը
Ձեր ճակատը պճնէ ծաղկով.
Ցիշեցէք զիս, երբ Աստղերը
Ձեզուն զ'հոգիս ձեր մոգ ցնորիւք։
Ցիշեցէք զ'իս, երբ ի՛ միասին
Ց'երգ կամ ի՛պար խայտաք, կայտռէք.
Ցիշէ՛, Թոյր իմ, երբոր մէնիկ
Եղնես ի՛ ճեմ, հոն՝ ուր մէկտեղ՝
Մեր արցունքներն ու ժպիտներ
Ցաճախ միմեանց են խառնուած։
Ցիշէ՛ եւ դու, որոյ սրտին
Խորունկին մէջ կայ ընկղմուած
Հոգւոյս, սրտիս ամենասուրբ
Խորհուրդներուն ճոխ ծրարը,
Որպէս ի՛ծոց Ովկիանու
Մարգարիտի փունջ մը անգին։
Մնաք բարեաւ, ծա՜ղկունք, մնտառք,
Ծովք, լեռք. քաղա՜քք, գիւղք եւ վա՜կք,
Ես արդ աստեղց եւ լուսնեկին
Հայրենիքը պի՛ ճամբորդեմ,

Պահեցէք, ո՜հ. մո՛ւթ անտառներ
Ցիշատակս ձեր Շուքին տակ,
Լեռներ, ձեր ջինջ ալեկաց մէջ,
Ծաղկունք, ձեր թարմ բաժակին մէջ։
Քաղաքք, ձեր վեհ աղմուկին մէջ։
Ո՜հ, պահեցէք պահպանեցէք
Իմ յիշատակս, ո՜հ, յիշատակս։
Ահա կիջնեմ ես արդ լռիկ
Անէութեան անդունդին մէջ։

ԱՌ ԼՈՒՍԻՆ

Երբոր վարդերն արշալուսոյն
Թռամին յ՛ստուերս վերջնալուսոյն.
Մթին մայրեաց տխրոտ ծոցէն
Ցառնեմ, ծլիս արծաթափայլ.
Զինչ նոր Հարս մի յ՛առագաստէդ.
Մերթ պատկառոտ կուսին նման՝
Ամպեր շղարշ ձգես դէմքիդ.
Կամ զինչ ակն կ՛բացխիս.
Սիրեմ՝ ցայգուն՝ ընդ պատուհանն
Ես յ՛իս սուզեալ մտայածիկ՝
Խորհիմ զ՛իմ մութ Ապագայէն.
Քո պէս անշուշտ, ո՞պերճ Լուսնակ.
Պիտ՛ յառնեն օր մը ոգիք
Գերեզմանաց աղջամուխջէն։
Ես կ՛սիրեմ, գիշեր ատեն,
Ճանանչներուդ հետ պլլուած՝

Թռչիլ դէպ հոն՝ ուստի դու գաս,
Ի՜նչ վսեմ են նշոյլներդ.
Երբ զ՛իմ դիմօք սահեալ հեղիկ,
Գգուեն դէմքս գուրգուրանօք.
Եւ մերթ փայլին արցունքիս մէջ.
Մերթ իմ վսեմ ժպիտիս մէջ.
Ծովերու ջինջ հայելիներ
Նշոյլներովդ կ՛պաղպաջեն,
Աստեղք շուրջդ շարուած ի՛պար։
Որպէս շարուին սիրուն նաժիշտք
Շուրջ զբամբշամբն արքայաշուք.
Մելամախաձոտ ովդ դու Լուսնակ,
Քանի՜ եռանդ կ՛ներշնչես
Իմ աղածրի հոգեկիս մէջ.
Ի՜նչ անծանօթ սուրբ յուզումներ.
Սրտիս ի՛խոր կ՛զեղուս դուն.
Երբ քո առջեւդ արձանանամ,
Գոգ Աստուծոյ ահեղաշուք
Մի անծածկոյթ Մատրան առջեւ՝
Կ՛ինջնեմ ի՛ծունր կալ համր յ՛աղօթս։
Լուսին, հոգւոյս խորհուրդներուն
Դուն երկնային մի Վկան ես,
Տար իմ խոկմունքս Աստուծոյ քով,
Եւ հանապազ իմ պահապան
Զուարթնոյն նման՝ հսկէ վրաս.
Դուն իմ Գիշերս Լուսաւորեցիր,
Դուն իմ մտացս խոր խաւարը
Փարատեցիր քաղաքերձիկ։
Բեւ ի՛մթան իսկ տեսնանեմ
Մտքիս, հոգւոյս լոյսն ես, Լուսին։—

ՔՆԱՐ

Հնչէ Քնար · զեղա՛ւ Սիրտ իմ,
Հուրն եռանդին կիզու ճակատս,
Ծաղկունք «դարձն» կը հծծեն ·
Երգդ, խորհուրդդ հոգեմայ
Թեւեր կուտան կայտառ հոգւոյս ·
Երգել պէտք է, բեկեալ սրտիս
Զուարթացման էն մեծ Դաղտնիք
Ո՜հ, երգելն է, երգելն է միշտ ·
Քնա՛ր, սիրտը՝ ընդ միշտ՝ Բեղմով
Դէպ ի՝ Երկինք սիրէ թեւել,
Բեղմով Բաջաց եւ Դիւցազանց
Անմահանան Յիշատակներ ·
Բեղմով Բերոբք՝ Երկնքին մէջ ·
Կ'օրհնեն իւրեանց մեծ Եհովան ·
Բեղմով բնութեան վսեմ ձայներ
Հասկնալի կ'լինին մեզ ·
Սիրտ իմ եւ միտք ծանր հոգերով
Ճնչած հեծէ սգալռիկ ·
Երբ քո ձէնիկդ առնուն, իսկոյն
Խայտան ի՝խինդ բերկրանաց ·
Բեղմով թշուառն իւր աղէտը՝
Սգաւորը իւր սփոփը՝
Գտնէ ընդ միշտ յուսածիծաղ,
Արցունք, հառաչ հրաժեշտուր
Ո՜հ, կ'թաղուին նուագաւոր
Ոսկեղինիկ լարերուդ մէջ ·
Որպէս կուսին շրթանց վրայ

Զայնին դաղտնիք, կամ սրտին մէջ՝
Երկնայուզիկ բոցոյն կայծեր ·
Քնա՛ր, սրտիս միակ Մեկնիչ,
Քեւ երբեմն երեմիան՝
Ողբաց զ'աւերս սուրբ Սիոնի ·
Քեւ երբեմն Երջանիկն Յոբ՝
Թռոյց սրտին խորունկ խորէն
Ցուսակտուր գաղջ թառանչներ ·
Այսպէս եւ դու, սիրո՛ւն քնար,
Ց'գերեզման միայն ինձ հետ՝
Ցուղարկաւոր պիտի երթաս ·
Եւ երբ վչտաց ալ աշխարհի
Մեռնին ձայներն ունկանս ի՝ մէջ,
Դուն հոն պիտի զարթնուս զուարթ ·
Եւ շուրջ շիրմիս պիտի խօսիս՝
Ամէն առտու՝ հետ զեփիւռին՝
Ամէն գիշեր՝ հետ աստղերուն,
Պիտի թրչես շիրմիս քարը ·
Եւ իմ հոգիս քո թեւերուդ
Զայնով, թռուցն երկնասլաց՝
Պիտի թռչի թեթեւասոյր
Դէպ ի՝ Դրախտն Անմահութեան ·

ՑԻՍՈՒՍ Ի ՄՍՈՒՐ

Մութն էր պատէր ողջ տիեզերք,
Ցաւիտենից մթոյն նման ·
Միայն աստղ մը Արեւելքի
Հորիզոնին վերայ շողար ·

Պայծառ էր նա՝ քան զ՝արեգակ ,
Դասք Սերոբիոյ իջին յ՝երկիր ,
Բնարի տեղ տաւիղն երգէր ,
Մարգերու տեղ՝ հրեշտակք մնչեն .
Եզանց , կովուց Մասուրին մէջ
Փայլակի պէս բան մը չողա՛յ .
Զ՝է նա Հրատ , կամ Մեսէօր ,
Խանձարուր մ՝է երկնապարգեւ .
Ցնցոտի մեզ թուի արդեօք .
Այլ հնոտին այն Խանձարուր
Զ՝ունէր կարան ու կարկտան .
Զինչ Յովսեփին այն պատմուճան ,
Նուէր անզոյգ Հօր մը ձեռաց ,
Այդ լուսափայլ ի՝ խանձարուր
Զ՝էր ոք կեսար աշխարհակալ .
Կամ թանկագին Իշխան հզօր .
Նա առնակոյս կամ հարսնուհի
Խեղճ Մարիամին Որդեակն էր ,
Զայն մ՝երկնքէն հնչէ ահեղ ,
«Դա է Փրկիչ Տիեզերքին» .
Այս ձայն հզօր քան գոռ որոտ ,
Արագավար քան զ՝մրրիկ ,
Շուտահասիկ եւ քան զ՝միտս ,
Հա՜ս , սթափեց հին Աշխարհին
Թմրած խաւար Ըղձղները ։
Մամռոտ շիրմաց մէջ յուզեցան ,
Մարգարէից մոխրոտ Նշխարք ։
Արքայք , ընդ շուտ Նուէրներով
Կալան զփոյթ զալ ի՝ պաշտօն
Այդ նորածին տխեղծ Մանկան ։

Ոսկի , կնդրուկ անուշ զմուռս
Խանձարուրին քով կը զեղուն .
Այդ մանուկը Քրիստոս էր ,
Զոր եզն ու կով Մասուրին մէջ ,
Տաքցնէին իրենց շնչով ։

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ Ց՚ՈՏՍ ԽԱՉԻՆ

Ի՞նչ ահաւոր հեծելութիւն
Ո՞հ կը լսուի Գողգոթայէն ,
Գոգ Մարդկութիւն մի ահաւոր
Ճգնաժամի մէջ կը հեւայ ։
Տիեզերաց դէմքին վրայ
Ահեղ Սգոյ դալուկ մը կայ ։
Արեւն անգամ ծածկէ իւր դէմք .
Քամին իւր շունչն ու գոռ թափը
Ինքն իւր մէջը , ինքը իրմով
Ցնքած , լռած , մնայ մնջիկ ,
Ժայռք առ վշտին՝ լեզու կ՝ելնեն ,
Տապանք պատռին , ոսկերոտիք
Ի՝դուրս կոտնուն զահի հարեալք ,
Ովկէան պակնու անդնդախոյս
Սարսռին հրշտակք , լողան Քերովբք .
Եւ Անմահին ահեղ կամար
Փլուզամերձ կ՝ճռնչէ ։
Նորանշան վրդովում մ՝է ։
Երկինք երկիր ահաբեկեալ
Գոգչիր միմեանց ընդհարուելու ,

Սպառնալեօք կ'խռովին,
Եւ Բնութեան իսկ անյեղլի
Դաշնակութիւն կ'խանգարուի.
Իւր Արարչին նորահրաշ
Փառացն Վկայն ու Ներբողը
Կ'հանդիսանայ ահեղաբար։
Մայրն Աստուծոյ կայ Խաչին տակ,
Տկար կնոջ պէս գողահար՝
Բուռ բուռ թափէ զ'աղին արտօսր.
Փարի Խաչին, ողբայ զ'Որդին։
Յիսուս-Որդին Խաչին վրայ,
Ի՜նչ տիրադաւ, անքաւելի
Տիեզերական ահեղ Ոճիր,
Տեսնել այժմ Աստուածածնայ
Մխածինը՝ դա քառաթեւ
Կախաղանին վրայ դամուա՜ծ։
Աստուածածինն ի' դուճս իջած,
Երբ կ'աշխարհէ եղերամայր
Մեր Արարիչն եւ մեր Փրկիչ,
Մաթթ է լռել Տիեզերքին։



ՄՐՉԻՒՆՆ ԵՒ ԺՊՈՒՌ

Դա սիզուտին չիւղից ներքեւ,
Տես ինչպէս կ'երերտակայ.
Թռչիլ կ'ուզէ, թեւիկ չ'ունի.
Բալել կ'ուզէ, դոդ ոտք պակսին,
Արշալուսին նշուլին հետ՝

Վազայարոյց զարթնու այսպէս։
Եւ միշտ անխոնջ, միշտ բեռնաբարձ.
Ընդ քար, ընդ փուշ, ընդ ափափայս
Անցնի անկայ եւ անարգել.
Դանդաղ մարդոյն թմրած հոգւոյն
Աշխատանաց խանդ ներշնչէ.
Հոգնած, լքուն Աշխարհալալին
Ուսուցանէ չ'յուսահատիլ
Բնաւ Կիկլոպեան պարսպաց տակ։
Տես, կ'երերայ, կ'երերակայ
Անզօր մրջիւնն ու չքոտի.
Եւ լուռ ու մունջ գնայ ուղին.
Բայց տես, լի է շտեմարան.
Տես արդ անցան գարուն, ամառ,
Փչեց քամին, պատեց սառոյց.
Ձիւնն ու կարկուտն ալ հարուածեց
Մեր տնակներն ու մեր արտեր,
Բայց նա անհոգ եւ հանդարտիկ՝
Իւր համբարին քաշուած անկիւն.
Իւր ընտանեաց քովիկն անդորր՝
Կը վայելէ իւր քրտանցը
Արդ անկապուտ արգասիքը։
Մինչդեռ ճպուռն շաղակրատ՝
Որ շատ խօսուկ եւ քիչ գործող
Մարդոց նման ճչէր ընդ միշտ.
Եւ օրն ի' բուն՝ ճիւղին կապված՝
Կ'երգէր, պարէր, եւ մերթ հեգնէր
Մեր մրջիւնիկն աշխատասէր.
Այժմ ցրաէն կը դողդղա՜յ,
Ջ'ունի չիւղիկ մ'ոգեպահիկ.

Որ իւր օրուանն ընէ պարէն ։
Այլ արդ նոթի եւ անուանդ
Հեծէ , վայէ տխմարաբար ։
Արդ՝ միտ դրէ՛ք . ով Ընթերցողք ,
Մեր մրջիւնին ու ճպուռին
Անզուգական օրինակին .
Աշխատանաց ժամերնուս մէջ .
Թէ որ միայն երգենք՝ , կայթենք՝
Ու չ՚աշխատինք՝ պէս մրջիւնին՝
Օր մ՚ալ անշուշտ՝ պէս ճպուռին՝
Մնամք նքթի եւ միշտ կարօտ ։

ԿԱԹԻԼ Մ՚ԱՐՏԱՍՈՒՔ
ՄԱՑՐԻԿԻՍ ԾԻՐՄԻՆ ՎՐԱՑ

Ի՜նչ անիծեալ ճակատագիր ,
Լինիլ դուստր եւ միամօր ,
Եւ առանց մօր , ո՜հ , ասա ապրիլ ։
Ամէն ճագուկ իւր մայրն ունի ։
Երբ ճըւճըւայ , մայրիկն անդէն
Փութայ ցաւոց դարման մը տալ .
Մայր , կը տեսնես արդ Փերուզդ .
Որ երբ վշտաց եւ ցաւոց մէջ ,
Արցունք թրչեն իւր թարթիչներ
Չ՚կաս , ո՜հ , որ սրբես աչերս ,
Մայր իմ , ինձ չմտ համարեցիր ,
Գիրկդ ու ծոցդ , ուր գգուէիր

Ո՜հ , ինչ զուարթ կը խայտայի ,
Երբ զիս գիրկդ կը տեսնէի ։
Մայր իմ , աւաղ , այն քո ձեռքդ
Որ Փերուզդ կը փայփայէր ,
Աւաղ , հիմիկ սեւ հողին տակ ,
Ցամքած , չորցած՝ կմախք դարձաւ ։
Մայր իմ , լռեց այն շրթունքդ
Որ միշտ «Փերուզս» կը կոչէր ։
Մա՜յր իմ , ուր արդ գնացիր .
Չ՚գիտցար թէ , հոս Փերուզդ
Ո՜րքա՛ ու անմայր պիտի մնայ ։
Մա՜յր իմ , Ո՜վ անոյշ Մայր ,
Ներեցիր որ գերեզմանդ՝
Մանկիկ աչքիս արցունքովը
Թրչեմ , ու միշտ զիրեզ սգա՜մ ։
Մայր իմ , գոնէ հոդ՝ Երկնքէն՝
Միշտ աղօթէ դստերդ համար .
Մի մոռնար թէ՝ երկրի վրայ ,
Փերուզ մ՚ունիս , որ միշտ Ոչ է ։

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՌ

ԱԶՆՈՒԱՑՈՒՔ ՀԱՅՐ ԻՄ

ՄԵԾԱՊԱՏԻՒ

ԳԱՍՊԱՐ Լ.Փ. ՓՈՒԱՆԿԻԼԵԱՆ

Ի ՑԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ

ՈՐԴԻԱԿԱՆ ՄԻՐՈՅՄ

ԿՆՈՒԻՐԵՄ

ՆՈՐԱԲՈՅՐ ՏԱՒԻՂՍ

ԴՈՒՍՏՐԴ

ՎԻՐԳԻՆ Գ. ՓՈՒԱՆԿԻԼԵԱՆ

ՄՐՄՈՒՆՋ ԿՈՒՍԻՆ Ի ՄԱՏՐԱՆ

Որ աղաղրի ճիղմ մանկտւոյն
Շրթանցն ետուր երգ անծանօթ,
Որ թռչնեկին անտառաղօղ
Ետուր աւաչ հեշտանուագ.
Հողմոց ի՛ թուփս եւ ի՛ ծաղկունս
Ետուր հծծել եւ շշնչել,
Մեղուին բզզալ, շանթին գոռալ,
Ետուր ալեաց կողկողել յ՝ափն.
Աստուած հզօր, ամենակալ,
Տուր եւ այժմիկ իմ շրթնեկաց
Երգել զ՝Քեզ մեղմ ի՝ մրմունջս.
Ծաղիկն հոտէն, թուփէն թռչնիկ.
Զ՝իս ի՝ քո երգ կ՝դրդեն յար.
Առ ո՞ շրթանցս ալէլուներ,
Առ ո՞ հոգւոյս թռչուն խունկեր,
Նուիրեցիս քան առ Քեզ, Տէր.
Քաղցր է ինձ, Տէր, ընդ այգս այգուն,
Ընդ շողս արփւոյն գալ հանապազ
Կրկնել ծնրիկ խոնարհաբար
Ի՝ գոհութիւն զ՝Էդդ՝ Հօրէդ.
Դու լոկ, Դու, Տէր, կարես սիրոս
Մխիթարել իւր վշտերէն.
Դուն լոկ թափած արցունքներուս
Գթոտ աչօք կրնաս հայիլ,
Աղօթիցս հետ եւ իմ ըղձեր
Սիրեն սրանալ առ Բարձեալդ,
Քաջ գիտեմ թէ՝ լոկ Դու կարես

Լնուլ սրտիս անհուն փափաք.
Քեզմով միայն ես երջանիկ
Կրնամ ապրիլ եւ հանդարտիկ,
Այս վշտաբոյս Հովտին ի՝ մէջ.

ԱՄՑԻՍ

Թուփին մէջ՝ սոխակ,
Խոտին տակ՝ առուակ
Աւաչ ու խոխոջ
Հանեն միշտ դողդոջ.
Վարդեր կարմրորակ,
Յասմիկ սպիտակ,
Շուշան ձիւնաթոյր,
Մեխակ խնկաբոյր
Դրախտը պճնեն,
Մարգարտի զօրէն.
Կը մայէ գառնուկ,
Գառնուկն անմեղուկ,
Կ՝ոստոստէ ուլիկ
Ուլիկ խորոտիկ,
Երկնքէն արեւ
Ժպտի մեր վերեւ.
Եւ ես ծաղկափունջ
Զոյգ ընդ իմ մրմունջ՝
Ընծայեմ առ Քեզ,
Տէրդ Ապէնիէզ.

Ծաղիկ մ'է շրթնիկ,
Բուրիկ մ'է շնչիկ,
Բուրվառ մ'է սրտիկ։
Միշտ առ Քեզ սլացիկ։

ՔՆԱՐ ԼՈՒՆ

Է՞ր այդպէս լուռ մնաս, Քնար,
Ո՞ւր այն մատներ, մատներ ճարտար
Որ հանապազ թրթռացնէին
Սիրաղողդոջ հնչուն թելերդ,
Երգէ՛ քնարս, ընդէ՞ր լռես,
Բա՛ւ փոշոտուած մնաս ի՛ կախ,
Չ'ունի հոգիս, առանց Քեզ՝ ձայն,
Սիրտս խուլ է, շուրթս մունջ է.
Առանց Քո քաղցր նուագներուն։
Մէն մի նուագդ երկնադաշնակ՝
Վսեմ դողում մ' Հոգւոյս կուտայ.
Հնչէ՛, Քնարս, հնչէ՛ քաղցրիկ,
Երբ սիրտս հեւայ, վշտի մը տակ.
Զէնիկիդ մէջ գտնեմ Սփոփ,
Երբ արտասուած պահուս լսեմ
Քու ձէնիկդ մեղամախաձոտ.
Յանկարծ փոխուին իմ արցունքներ՝
Ուրախութեան ժպիտներու։
Քնար, սրտիս դու մխիթար.
Քեզմով ամէն ինչ եմ ես հոս,
Քու թելերով՝ ինչպէս միաքս՝

Լիւղի՛ յ'ովկէան Զմայլանաց,
Նոյնպէս եւ օր մ'իմ Հոգեակս.
Նուագներուդ թեւերովը
Պիտի թռչի յ'Անմահութիւն։

ՄԱՆԿԻԿՆ

Տէս, սա քնքոյշ յ'օրօրոցին
Մանկիկ սիրուն անմեղունակ
Ի՞նչ ժպտի վարդափթիթ.
Աչեր ունի, աչեր չքնաղ,
Ծաղկաբուրիկ շրթանց վրայ
Շողայ ժպիտն իւր խանդավառ,
Որպէս ոսկոն ի'թերթ ծաղկին.
Կամ զինչ նշոյլն՝ ի'ջինջ վտակ։
Ո՜հ, երբ աչերն իւր արցունքով՝
Դէպ ի'յերկինք՝ դէպի ծնողք
Իւր դարձնէ լալահառաչ,
Կարծես վսեմ մ'անդ կ'աղօթէ.
Քան լուսնկան պայծառ է նա.
Քան զ'ծաղիկ անուշաբոյր.
Պատկերի պէս դեղեցիկ է,
Տուր, Տէր, չնորհդ այս մանկիկին
Որ ինձ լինի մի մեծ եղբայր.
Երբ հնչէ յ'իւր Մօրկանն ի'գիրկ,
Գոգչիր հրեշտակ մ'է որ կը նիրհէ
Առ Աստուծոյ գթոտ ծնկամբ.
Մանկիկ, այդ քու մէն մի նայուածքդ՝

Մէն մի վսեմ պաղատանք է ·
Այդ քու մէն մի պաղատանքդ՝
Մէն մի վսեմ, հո, աղօթք է ։
Վարդեր թափին այտէդ, ճակտէդ ·
Գեղ ու շնորհք կաթեն շրթնէդ ·
Աչքդ է բացուի, թէ նշոյլ մ'է,
Որ նոր կուգայ փայլել առ մեզ՝
Ժպիտն է որ այտդ ու շուրթդ
Կը փութէ՝ թէ, ծաղիկ մ'է որ
Կուգայ կոկոնն յ'իմ ափ պտկել ։

ԱՌՈՒԱԿ

Տես. սա ծաղկոտ դրախտին մէջ,
Լուսախոխոջ կը դդէջ
Ականակիտ վճիտն առուակ,
Ո՜հ, ինչ հեզիկ կը մրմնջէ
Սա ծաղկաւէտ դալարեաց տակ ·
Գոգ նորաստեղծ քաղցր երգ մ'է,
Երբոր այգուն բոսոր ճաճանչ
Սարերն ոսկեաւ կը ղօծանէ,
Նախ առուակին շողայ ի՝ծոց ·
Երկնից կապոյտն՝ ոչ ի՝կուսին
Փայլի յ'աչկունս այնքան խորոտ ·
Որչափ ծփայ ի՝ջինջ բիւրեղդ ։
Հովիկն՝ որ իւր փափկիկ թեւով
Ջնջէ քրտունքն այրած ճակտիս,
Չ'եւ քո ալեացդ ծաղկունքները

Չ'եւ չ'ողջունած՝ չ'դար առ իս ։
Առուակ վճիտ, քու ալեաց պէս,
Գնան անդարձ եւ իմ օրեր ։
Իսկ իմ անցած աւուրց վրայ ·
Լոկ աննշան նսեմ կը կայ,
Քանի արցունք, հո, խառնեցին
Վշտահարին ականջիք
Քո դդէջուն ալեկացդ հետ ·
Առուակ, չ'ունիմ այլ Ցիշատակ,
Լոկ ստուերն իմ, չիթ մը արցունքս
Քու ծփանքիդ կ'ուտամ աւանդ ։
Որ երբ ծաղկոտ ու ծիծաղկոտ
Դաշտաց՝ հովտաց անցնիս միջէն,
Սիրէ զ'անոնք՝ ուր որ գտնես
Արեւակէդ, թօշնած ծաղիկ ։ —

ԻՂՁ ՀԱՑՐԵՆԵԱՑ

Թէ լինէի ամպ թափառուն,
Զով հովանեաւս շուք կ'ընէի
Հայաստանիս այրած ճակտին ։
Թէ ճաճանչ մը, հո, լինէի,
Հայաստանի տխուր դէմքը
Լոկ լուսելու համար միայն՝
Ցերկնից յերկիր կ'շողայի ·
Թէ ծաղիկ մը, հո, լինէի,
Հայաստանիս՝ աւերցը՝ մէջ՝

Կ՝փթթէէ՛ գեղաբուրիկ,
Ի՝ զարդ Շիրմաց իմ Նախահարց։
Թէ լինէի գարնան զեփիւռ,
Լոկ Հայրենեացս այրած լանջաց
Ի՝ զովացումն եւ ի՝ խնկումն՝
Կը սուրայի թեթեւաթռիչ։
Թէ լինէի մի նոր Կիթառ.
Լոկ Հայրենիքս իմ սիրելի
Կ՝նուագէի հոգեառուիզ։
Թէ լինէի վճիտ վտակ,
Ո՜հ, Հայրենեացս պերճ Դրախտին
Ծաղկոտ դաշտաց, մարգացն ի՝ մէջ,
Ես սոզայի սիրապատոյտ.
Թէ լուսնկայ, մ՝, ո՜հ, լինէի,
Լոկ Հայրենեացս մութ գիշերուան
Կը ցոլայի արծաթավայլ։
Թէ հրեշտակ մ՝, ո՜հ, ըլլայի,
Քնարս առած՝ յ՝երկնուստ ի՝վար
Ո՜հ, կ՝ինջնէի սիրաթռիչ,
Եւ հոն Ազգիս աւերց միջէն՝
Ես Քնարովս առ՝ մեծն Աստուած
Կ՝աղերսէի, զի թերեւս՝
Այն Աստուածը, որ Երկնից մէջ՝
Վասն Հայրենեացս տաւղած երգերս՝
Թէ չ՝լսեց ու չ՝իմացաւ,
Գուցէ այս հէք Աւերց միջէն
Լսէ՛ ձէնիկս իմ անկեղծիկ։

ՄԱՆԻՇԱԿ

Շիկնոտ ծաղիկ, դու մանիշակ,
Է՞ր միշտ կքիս, կքրէ պահ մ՝ալ։
Բնութեան որ Աւետարան
Ուսոյց քեզ այն բարոյական՝
Թէ խոնարհիլ, Բարձրանալ է.
Ո՜վ, պատկառոտ, դու մանիշակ,
Է՞ր ամօթլէած կքես ճակատ,
Ո՞վ ուսոյց քեզ՝ թէ գեղեցկին
Է՞ն գերագոյն յատկութիւնն է՝
Գեղոյն ծածկոյն տալ ակնածանքն.
Ո՞վ ուսոյց քեզ, ծաղիկ Շիկնոտ,
Թէ պահողն է՝ փոքրո՞ւ է.
Քանի ծածկես դէմքդ ամօթխած,
Եւ թանգուզես զ՝անձնդ ի՝ դալարս,
Բոյրդ մատնէ զքեզ, Զքնար,
Համեստ ծաղիկ, եւ ես՝ զինչ քեզ,
Ղօղեմ զանձն իմ մատաղատի,
Ընդ հովանեաւ՝ գթոյն Ծնողաց,
Դու քան զ՝ամէնն ես պատկառոտ,
Պատկառիլն է անմեղութիւն.
Սիրեմ եւ ես՝ իբրեւ զքեզ,
Ծաղկիլ լռին, բուրել լռին,
Լաւ է զդալ եւ զգացուիլ
Քան ճոխ ու պերճ բացատրել
Եւ ճարտասան բացատրուիլ.
Սիրեմ զսիրան ես՝ քան զմիտ։
Բոյր ունի սիրտ, թիւ ունի միտ,
Բուրել սիրեմ ես՝ քան թռչել։

ՄԱՀ ԿՈՒՍԻՆ

Վարդի թերթ էր դեղնեցաւ,
Թէ աստղի շող մարեցաւ.
—Ո՜չ. կուսին այտն էր գալկացաւ.
Կուսին աչերն էին, չիջան—։
Քնաթ բեկաւ, սոխակ լռեց,
Թէ բնութեան ձայներն հատան։
Ո՜չ. կուսին չունչ՝ շրթանց վերայ
Հեւքն ի՛կրծին, ո՛հ, ցամքեցան։
Թռաւ հոգիդ, անբիծ տաճարակ.
Որպէս թռչի մի հրեշտակ.
Պահ մ՚յերկրի աստ շրջելէն վերջն,
Երանք, իզձեր՝ փափուկ Հոգւոյդ
Ո՜հ. արդ՝ քեզ հետ թոռմեցան շուտ,
Թոռմեցար դու, Այ՛ն, ո՛ կոյս.
Թառմեցուցիր եւ քո ծնողացդ
Հոգւոց, սրտից խնդումները.
Պիտի ողբան ամէնքն զՔեզ.
Դուն յ՚ամենայնն՝ ամենայն Քեզ
Յոյժ սիրելի եւ քաղցր էր,
Թռչունք մահդ պի՛ ճռուզեն,
Քնարք զքեզ պիտի ողբան,
Առուակն արցունքդ զուր պի՛ խնդրէ,
Արեւն աչերդ զուր պի՛ փնտռէ,
Դաշտեր շուրդ պիտի ուզեն,
Հայլիք դէմքիդ պի՛ կարօտին,
Դաշնակ մատներդ պիտի խնդրէ,
Հոգեղմայլ առ ի՛նուագ։—

Եւ քան զամէն՝ նորա ոգին
Ամէն գիշեր՝ հետ Լուսնեկին.
Ամէն առտու՝ հետ Արեւուն,
Պիտի յիշէ, պիտի թանայ
Կուսածաղիկ, անմեղունակ
Կենացդ աղնիւ, վեհ Ցիշատակ։—

ԴՐԱԽՏ

Մեր Նախամօրն դեղձան հերաց
Դու ոսկեղէն փնջեր տուիր.
Ի՛քո ծոցիդ Անեղաչէն
Վարդն իւր կարմիր եւ բուրաւէտ
Թերթերն ի՛լոյս փթթեց բիւրեղ,
Անդ՝ զ՚առաջինն՝հագաւ ձիւնիկ
Սպիտակափառ այն պերճ շուշան։
Անդ իւր շղարշն բոսորափայլ
Ագաւ մեխակն այն շառագոյն։
Հոն թռչնիկներ մեղանուագ
Կ՚դայլայլեն իւրեանց գեղգեղ.
Հոն կը սողայ երկնապարգեւ
Քառավտակն ադենաբուխ։
Հոն Եւային նախկին տուներ
Գիտցաւ ման գալ ծաղկանց վրայ,
Հոն մարդն ուսաւ առջի վանկը,
Առջի բառը, հոլովն ու բայ.
Հոն մարդկութիւն տեսաւ իր քով՝
Իր մանկական քայլից, մտացն՝
Երկնից Աստուածն ուղ, առաջնորդ։

Դրմխտ, նախկին Դպրոց Մարդոյն.
Անդ՝ Քեզ Աստուած եղեւ վարպետ.
Ուսոյց ծաղկին հետ եւ մտքին
Խոկա՛լ լոին, թռչի՛լ ի՝ թեւ։
Դրմխտ, որբան դու Մարդկութեան,
Դու քաջ Հայոց Մայր ու Դահեակ,
Դու ծաղկանցդ հետ բուսցուր այժմ
Իմ նախահարց Քաջութիւնն.
Ցարո՛ 'կողիցդ զ'Որդիս Հայկայ։
Եւ երբեմն՝ որպէս Դաւիթեօք
Մարդոց նախկին այն մեծ Մօրը՝
Այն մեծ նախկին Թագուհիին
Ճակատն ի՝ շուք պճնէիր Դուն.
Պճնէ՛ եւ այժմ մեր այրի Մօրն՝
Հայաստանի անշուք ճակատը։

ՑԽՐՈՒԹԻՒՆ

Առ ինչ պիտոյ ինձ պալատներ,
Պճնած ոսկեաւ եւ արծաթեաւ։
Առ ինչ պիտոյ ապարաններ
Իշխանապերճ, շքեղաշուք։
Սիրտս՝ իմ մէջս հեծէ այնպէս,
Որպէս յ'ստուեր նոճւոյն՝ հեծէ
Գիշերաջայլ տխուր բուէն։
Ծաղկունք բերեն ինձ փունջ ի՝ փունջ.
Իմ սրտիկն, ո՛հ, թոռմած է։
Կ'ըսեն, «ի՛ջնենք, ճն, ի՝դրախտ».
Ո՛հ. իմ հոգիս աւերակ է.

Հեռի՛ յ'ինէն, ձայնք Հրճուանաց,
Հեռի՛ յ'ինէն, զուա՛րթ Տեսիլք.
Ցաւոց ցեցեր թող կրծեն սիրտս.
Զի տխրանքն է արդ ինձ բաժին։
Այո՛, ընկերք, յոյժ տխուր եմ,
Տխրանքն ալ. ո՛հ, յոյժ անպատում
Քաղցրութիւն ու զմայլանք
Ունի վսեմ սրտի մը մէջ։
Սեւ է հոգիս, սա նոճւոյն պէս,
Այլ իմ սիրեն թափել արցունք.
Սիրոս ի՝հառաչ հրափետուր,
Սիրէ թռչիլ յ'ստուերս չիրմաց,
Զ'Աւերակ ու զ'Ամայութիւն
Սիրեմ ունել ընակութիւն,
Քարա՛յր տուէք, Հոն ճգնե՛մ ես,
Քո՛ւրձ ու մոխիր, աչխարհե՛մ միշտ.
Ստուեր թուին սա մարդերը։
Զ'ունի արեւն ալ հրապոյր,
Իմ այդ տամուկ աչերուս մէջ։
Զ'ունի աչխարհ գեղեցկութիւն
Իմ ցաւակոծ մտացս առջին.
Մարդեր գոգցես լոկ շուքեր են,
Կուգան համր, կ'անցնին համր,
Ալ իմ շրթներս այն քնարն են,
Որ կը սիրեն գիշեր ատեն՝
Սգատերեւ նոճեաց ներքեւ
Եղերերգել եւ վերանալ.
Ո՛հ, ես սերկեան կ'նմանիմ
Մարելու մօտ արեգակին՝
Որ սեւ ամպոց մէջ պլլուի

Խորասուզուիլ կ'փափաքի։
Ի'բաց յ'ինէն, վայելք կենաց,
Թոռված ծաղիկն կ'ուզէ երբէք
Նոր գոյն առնուլ, կանանչ հագնիլ։
Սեւեր բերէք, սեւեր հագնիմ։
Ծովերն աչացս, հողմեր շրթանցս
Տուէք ընդ միշտ, լամ, հառաչեմ,
Զի տխուր եմ, այս է տխրին
Բաժինն, աւաղ, աշխարհիս մէջ։
Տխրութիւնը սեւ պալատ մ'է,
Ուր սրբազան ողորմ հոգիք
Կը բնակին սգալրիկ։

ԿՈՑՍՆ ԱՌ ԹԻԹԵՌՆԻԿ

Թիթեռնիկ, թիթեռնիկ։
Քեզ կոչէ մորչ ծաղիկ։
Քեզ տաճար թարմ թերթիկ։
Քեզ օրրան իմ ափիկ։
Թիթեռնիկ, թիթեռնիկ։
Ո՞ւր թռչին քո թեւիկ,
Զինչ սրտիս իմ կարօտ՝
Կ'որոնես նոր նարօտ։
Յակինթ, շափիւղ, զմրուխտ
Շողան ճաճանչաւոր
Ի' թեւեր քո նախշուն.
Թեւ թեթեւ ու թրթռուն։
Ո՞ւր այդպէս թիթեռնիկ։—
—Երթամ յ'ողջոյն մանիշակին,

Որ ձիւնաթոյր պարզած թերթեր,
Խնկէ զ'եթերն ու բուրաստան։—
—Ո՞ւր արդ այդչափ թռչիս արագ։—
—Երթամ ի' թուի թառիլ վարդին,
Հոն թաւ, դալար, թարմ կոկոններ
Ինձ սպասեն ցողաթուրմիկ,
Տալ ինձ նեկտար եւ Ամպրոսիա։—
—Ո՞ւր արդ այդպէս թեթեւ թիթեռն,
—Երթամ յ Աւերս Հայաստանի։
Հայոց սրտին հուր եռանդներ,
Հայ հոգեկաց վառ աշխոյժներ,
Հայ մտքերու լուրջ խոկումներ,
Արշալուսոյ ցողոց նման՝
Դարնան անոյշ խնկոց նման՝
Հողմոց քաղցրիկ շնչոց նման՝
Շնչել, ափռել, յ'ափ՝փ Աւերց։
Երթամ տեսնել թէ Հայրենիք՝
Դարերէ ի'վեր ինչ հեծեծեց,
Եւ թէ իւր հեծք ց'արդ լսուեցան։
Որ եւ անտի դէպ ի' Երկինք՝
Շուտաթռիչ վերասլանամ՝
Հոն Անմահին յ'ունկն ի'խոնարհ՝
Հծծելո՛ւ համար իւր հեծն։
Գէթ Երկնքէն ասա բերելու
Զոր ինչ Երկիր ժլա՛տ, կցիր՝
Խուժ Բռնաւորք կը զլանան։—
—Երթաս բարեա՛ւ, մրգուղ թռնիկ։
Հողմերն օգնեն ճղճիմ թեւիդ,
Բայց մի մոռնար իմ շնչիկս ալ
Տարածանե՛լ թռուիդ հետ։

ՁՕՆ ԱՄԱՆՕՐՈՅ

Ա Ռ

ԱԶՆՈՒԱՇՈՒՔ ՀԱՅՐ ԻՄ

ԿԱՐԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ

Սիրտ իմ լի՛ քաղցր յուզումներով
Նորոյ տարւոյս լուրջ հրճուանաց ·
Մատչիմ խոնա՛րհ եւ պատկառո՛տ
Նօթ ճել Նոր Ամ երջանկաբեր ։
Փոխան Խնամոցդ եւ Գգուանացդ
Ի՞նչ տրիտուր ունիմ , Քեզ Հա՛յր ,
Լոկ երկու տող նուագաւոր ·
Որով միայն կարեմ պատուել
Ցիշատակդ , Հա՛յր սիրելի ։
Անցա՛ւ Տարին եւ դեռ պ'անցնին
Շատ տարիներ , բայց Անուանդ
Հա՛յր , միշտ անմահ պիտի մնայ
Աղջկանդ Դրչով կանգնած
Սիրոյ , Պատւոյ եւ Զմայլման
Այս Արձանին վրայ ի՛տես ։

Աղջիկդ
ՆԵՄԶՈՒԻՐ ԿԱՐԱՊԵՏ

ՀՀ Ազգային գրադարան
NL0109866